Լ. Կ. Խորշունյան

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԷՏԱՊՈՒՄ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Л. А. ХУРШУДЯН

МЕЖДУНАРОДНОЕ КОММУНИСТИЧЕСКОЕ ДВИЖЕНИЕ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ЗКИЗ

Լ. Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱՊՈՒՄ

A SSSO

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1960

Տպագրվում է
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ

Աշխատության մեջ տրվում է միջազգային կոմունիստական շարժման զարգացման ժամանակակից էտապի ընդհանուր բնութագիրը։ Հեղինակը ցույց է տալիս այն վճռական աղդեցությունը, որ ունեցան ՍՄԿՊ XX և XXI համագումարները և կոմունիստական ու բանվորական պարտիաների ներկայացուցիչների 1957 թ. նոյեմբերին Մոսկվայում կայացած խորհրդակցությունները միջազգային կոմունիստական շարժման վրա։

ՍՍՌՄ ԹԵՎԱԿՈԽՈՒՄԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԾԱՎԱԼՈՒՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Հարյուր տարուց ավելի է, ինչ գոյություն ունի միջազգային կոմունիստական շարժումը։

Կոմունիստական և բանվորական պարտիաները արտահայտելով ամենաառաջավոր դասակարգի՝ պրոլետարիատի շահերը, շրջապատված բազմաթիվ թշնամիներով, հաղթահարելով բազմապիսի դժվարություններ, ծանր պայքարում հերոսաբար մարտնչել և մարտնչում են խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի հաղթանակի համար։ Հին աշխարհի մութ ուժերը կոմունիստական շարժման ծագման առաջին իսկ շրջանից ջանք չեն խնայել հենց սաղմնային վիճակում խեղդելու այն և հնարավորություն չտալու նրան կապվելու բանվորական լայն շրջանների հետ։ Սակայն հերոս դասակարգի մարտական պարտիաները ղեկավարելով ճնշված մասսաների պայքարը կապիտալի դեմ, հետևողականորեն, բայց առ քայլ ջախջախում են միջազգային իմպերիալիզմի ուժերը, մերկացնում նրա իդեալոգիան և համարձակորեն մարդկությանը տանում դեպի կոմունիզմի լուսաշող գագաթները։

Եթե հարյուր տարի առաջ կոմունիզմը միայն տեսություն էր, իր փոքրաթիվ կողմնակիցներով, ապա այժմ այն դարձել է միլիոնների դաղափարախոսությունը, իսկ սոցիալիզմի հը-

զոր լագերի երկրներում աշխարհի բնակչության մեկ երրորդը այն արդեն իրագործում է կյանքում։

Միջազգային կոմունիստական շարժումը հատկապես արագ աճեց և զարգացավ վերջին 40 տարվա ընթացքում, այսինքն՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո, երբ աշխարհի մեկ վեցերորդ մասում բանվոր դասակարգին հաջողվեց գրավել իշխանությունը և հաստատել պրոլետարիատի դիկտատուրա։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ազդեցության տակ 1918—1921 թթ. կոմունիստական պարտիաներ ստեղծվեցին Գերմանիայում, Ավստրիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Ֆինլանդիայում, Արգենտինայում, Հոլանդիայում, Հունաստանում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Չինաստանում, Բուլղարիայում, Մեքսիկայում, Հարավսլավիայում, Բրազիլիայում, Իսպանիայում, Իրանում, Թուրքիայում, Չեխոսլովակիայում, Ռումինիայում, Բելգիայում, Շվեդիայում և մի շարք այլ երկրներում։

Մեր երկրում սոցիալիստական շինարարության մեծագույն հաջողությունների և կապիտալիստական աշխարհում դասակարգային պայքարի սրմանը զուգընթաց կոմունիստական շարժումն ավելի մեծ զարգացում ապրեց։

ԵՄՆ Կոմունիստական Ինտերնացիոնալի առաջին կոնգրեսում մասնակցում էին 30 երկրների կոմունիստական պարտիաների և կազմակերպությունների պատգամավորներ, որոնք ներկայացնում էին մոտ 300 հազար մարդու, ապա այժմ գոյություն ունեն 86 կոմունիստական և բանվորական պարտիաներ, որոնք իրենց շարքերում միավորում են ավելի քան 36 միլիոն մարդ։ Քսան տարվա ընթացքում կոմունիստական պարտիաների թիվն ավելացել է 82 անգամ։ Այդ պարտիաների շարքում Սովետական Միության Կոմունիստական պարտիան իրավամբ օգտվում է ամենամեծ հեղինակությունից։ Նրա ղեկավարությամբ մեր երկիրը դուրս է եկել կոմունիզմի կառուցման լայն ճանապարհը։

Սոցիալիզմի հզոր լագերի մյուս երկրներում աշխատավոր ժողովուրդը կոմունիստական և բանվորական պարտիա-

ների ղեկավարությամբ կառուցում է նոր, սոցիալիստական հասարակություն։

Սակայն այդ հաղթանակները հեշտությամբ չեն ձեռք բերվել։ Կոմունիստական շարժումն ունեցել է իր զարգացման բազմաթիվ դժվարությունները, խոչընդոտները ու անհաջողությունները։ Բանտերն ու աքսորները, անլեգալ աշխատանքի ծանր պայմանները, տիրապետող դասակարգերի մշտական հալածանքները, նյութական և այլ բազմապիսի դժվարությունները՝ ահա կոմունիստական շարժման մշտական ուղեկիցները կապիտալիստական աշխարհում։

Բուրժուազիայի դեմ մղվող պայքարում հաճախ այս կամ այն երկրի կոմպարտիայի համար ստեղծվել է չափազանց դժվար դրություն, որն ավելի է խորացվել ռևիզիոնիստների քայքայիչ գործունեության հետևանքով։ Բուրժուական պրոպագանդան քանի-քանի անգամ աշխարհին հայտարարել է միջազգային կոմունիստական շարժման մոտալուտ «կործանման» մասին։ Բայց բուրժուազիան միշտ էլ սխալվել է իր հաշիվներում։ Կոմունիստական շարժումը միշտ էլ հաղթանակով է դուրս եկել ծանր փորձություններից։

Կոմունիստական և բանվորական պարտիաների հեղինակությունը հատկապես բարձրացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ նրանք հանդես եկան, որպես ֆաշիզմի դեմ մղվող պայքարի կազմակերպիչներ ու ոգեշնչողներ։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ չնայած պատերազմի ժամանակաշրջանում տված հազարավոր զոհերին, կոմունիստական և բանվորական պարտիաների անդամների թիվը նախապատերազմյան շրջանի 4,2 միլիոնից աճելով, պատերազմի վերջում հասավ 20 միլիոնի։ Հետպատերազմյան առաջին տարիներին կոմունիստները մտնում էին Իտալիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Բելգիայի, Ֆինլանդիայի, Դանիայի, Նորվեգիայի, Իսլանդիայի և Լյուքսեմբուրգի կառավարությունների կազմի մեջ։ Թեև ռեակցիան, համախմբելով իր ուժերը, գործի դնելով սուտն ու կեղծիքը, ոստիկանական բոլոր միջոցները, կարողացավ ընտրական խարդախությունների միջոցով վերոհիշյալ պետությունների

կառավարությունների կազմից հանել կոմունիստներին, բայց չկարողացավ սասանել նրանց ամուր դիրքերը, մեկուսացնել նրանց իրենց ժողովուրդներից։

Կոմունիստական շարժումը միշտ էլ հաղթահարել է իր առաջընթացի ճանապարհին եղած բոլոր արգելքները և դասակարգային կռվի ծանր պրոցեսում հարստացած պայքարի նոր փորձով, ավելի ամրապնդվել ու էլ ավելի վճռականորեն շարունակել անդասակարգ հասարակարգի, մարդկության լավագույն ապագայի համար մղվող պայքարը։

Արդի պայմաններում միջազգային մասշտաբով արմատապես փոխվել է ուժերի հարաբերությունը, սոցիալիզմը դուրս է եկել մեկ երկրի սահմաններից և դարձել համաշխարհային սիստեմ։

Սոցիալիստական երկրների ժողովուրդները նոր հասարակարգի կառուցման գործում, կոմունիստական և բանվորական պարտիաների ղեկավարությամբ, որոնց անդամների քանակը 28 միլիոն է, ձեռք են բերել խոշոր նվաճումներ։ 1958 թ. ՍՍՌՄ արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ աճել է 36 անգամ։ Երբեմնի հետամնաց ագրարային Ռուսաստանը, շնորհիվ սոցիալիստական հասարակարգի առավելությունների, դարձել է աշխարհի ամենազարգացած երկրներից մեկը։ ՍՍՌՄ-ն իր պատմական դերով և պայքարի հարուստ փորձով հանդիսանում է սոցիալիստական լագերի դրոշակակիրը և առաջատար ուժը։ Մեծ են նաև սոցիալիստական լագերի մյուս երկրների ձեռք բերած հաջողությունները։ Չինական ժողովրդական ռեսպուբլիկան 1950—1958 թթ. արդյունաբերական արտադրությունը ավելացրել է մոտավորապես տասն անգամ։

Նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ 1958 թ. արդյունաբերական արտադրանքը Լեհաստանում աճել է ավելի քան 5,5 անգամ, Չեխոսլովակիայում՝ 3,3 անգամ, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայում՝ ավելի քան 2,5 անգամ, Ռումինիայում՝ գրեթե 4 անգամ, Հունգարիայում՝ ավելի քան 4 անգամ, Բուլղարիայում՝ մոտավորապես 9 անգամ, Ալբանիայում՝ 18 անգամ և այլն։

Սոցիալիստական լագերի բոլոր երկրների պատմական փորձը ցույց է տալիս, որ տնտեսական զարգացման բարձր տեմպերը սոցիալիզմի բնորոշ օրինաչափություն են։ Նրանց հաջողությունները վկայում են, որ կոմունիզմի ուղին միակ ճիշտ ուղին է մարդկության համար։

Սոցիալիստական լագերի ժողովուրդների յուրաքանչյուր նվաճումը, յուրաքանչյուր առաջընթացը քայլը կապիտալիստական երկրների կոմունիստական և բանվորական պարտիաների համար ստեղծում է աշխատանքի և պայքարի ավելի բարենպաստ պայմաններ, ամրապնդում նրանց դիրքերը։

Ունենալով իր զարգացման ընդհանուր օրենքները, միջազգային կոմունիստական շարժումը տարբեր երկրներում համաձայն տեղական սպեցիֆիկ պայմանների, հարստանում է կապիտալիզմի դեմ մղվող պայքարի նորանոր ձևերով։ Այդ կապակցությամբ էլ տարբեր երկրների կոմունիստական և բանվորական շարժման ուսումնասիրությունը ստանում է չափազանց կարևոր նշանակություն, քանի որ այդ հնարավորություն է տալիս վեր հանելու և ընդհանրացնելու կոմունիստական շարժման առանձին ջոկատների պայքարի լավագույն փորձը և դրանով իսկ հարստացնելու մարքսիզմ-լենինիզմի գիտությունը։

* * *

Մեր ժամանակներում միջազգային կոմունիստական շարժումը մտավ իր զարգացման նոր, ավելի բարձր փուլը, որի սկիզբը հանդիսացավ ՍՄԿՊ XX համագումարը։ Մարդկային հասարակության զարգացման ժամանակակից էտապը բնորոշվում է սոցիալիզմի ուժերի աննախընթաց աճմամբ և կոմունիստական շարժման հզոր վերելքով։ Տվյալ էտապի խոշորագույն իրադարձություններն են հանդիսանում ՍՄԿՊ XX համագումարը (1956 թ. փետրվար), կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցությունները Մոսկվայում (1957 թ. նոյեմբեր) և ՍՄԿՊ XXI համագումարը (1959 թ. հունվար)։

Դասակարգային մարտերի բովում կոփված Սովե-

տական Միության Կոմունիստական պարտիան, որը համաշխարհային սոցիալիստական սիստեմի և կոմունիստական ու բանվորական շարժման հմուտ, փորձված իդեական ղեկավարն է, XX համագումարում ընդունեց սոցիալիզմից ասիճանաբար կոմունիզմին անցնելու նոր, հոյակապ պլան և միաժամանակ համարձակորեն քննադատեց անհատի պաշտամունքի հետ կապված մեր երկրում գոյություն ունեցող թերությունները ու սխալները՝ մշակելով մի շարք միջոցառումներ դրանք վերացնելու համար։

Սոցիալիզմի մի երկրի սահմաններից դուրս գալու և համաշխարհային սիստեմի վերածվելու առնչությամբ ՍՄԿՊ XX համագումարը վերլուծության ենթարկեց միջազգային իրադրության մեջ կատարված արմատական փոփոխությունները և դրանից արեց մի շարք խորը գիտական հետևություններ, որոնք նոր պատմական պայմաններում, առանձին եղբայրական կոմունիստական ու բանվորական պարտիաների և ամբողջ միջազգային կոմունիստական շարժման ստրատեգիայի ու տակտիկայի մշակման գործին ցույց տվեցին անգնահատելի օգնություն։ Ահա թե ինչու ՍՄԿՊ XX համագումարի որոշումները մեծ ազդեցություն ունեցան միջազգային կոմունիստական և բանվորական ամբողջ շարժման վրա։

Հաշվի առնելով աշխարհում տեղի ունեցած արմատական փոփոխությունները, ՍՄԿՊ XX համագումարը դատեց, որ «...բանվոր դասակարգը իր շուրջը միավորելով աշխատավոր դյուղացիությանը, ինտելիգենցիային, բոլոր հայրենասիրական ուժերին և վճռական հակահարված տալով օպորտունիստական տարրերին, որոնք ի վիճակի չեն հրաժարվելու կապիտալիստների ու կալվածատերերի հետ համաձայնողական քաղաքականությունից, հնարավորություն ունի պարտության մատնել ռեակցիոն, հակաժողովրդական ուժերին, կայուն մեծամասնություն նվաճել պառլամենտում և բուրժուական դեմոկրատիայի օրգանից այն վերածել իրոք ժողովրդական կամքի գործիքի»[1]։

---

[1] Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ ԿԿ հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին, Հայպետհրատ, 1956, էջ 54—55։

ՍՄԿՊ XX համագումարը պարզ ու որոշակի պատասխան տվեց երկու սիստեմների խաղաղ գոյակցության և արդի դարաշրջանում պատերազմները կանխելու պրոբլեմներին։ Համագումարը ցույց տվեց, որ կապիտալիստական աշխարհում աճում են հակասությունները. ուժեղանում է աշխատավոր ժողովրդի պայքարը իր կենսական իրավունքների համար, որ կապիտալիզմը անշեղորեն գնում է դեպի տնտեսական ու սոցիալիստական նոր ցնցումներ։ Համագումարն անդրադարձավ իմպերիալիզմի գաղութային սիստեմի քայքայման հարցին, ցույց տալով, որ այդ սիստեմը ապրում է իր վերջին օրերը։ Գաղութային երկրների ժողովուրդները մեկը մյուսի հետևից թոթափում են իմպերիալիզմի լուծը և բռնում իրենց երկրների անկախ զարգացման ուղին։

ՍՄԿՊ XX համագումարը հանդիսացավ միջազգային կոմունիստական և բանվորական շարժման զարգացման նոր էտապի սկիզբը։

Այս էտապը բնորոշվում է մի շարք նոր սկզբունքային հարցերի առաջ քաշումով, եղբայրական կոմպարտիաների՝ սոցիալիզմի համար մղված պայքարի ուղիների՝ համաձայն առանձին երկրների սպեցիֆիկ պայմանների ստեղծագործական մշակումով, դասակարգային պայքարի ձևերի բազմազանությամբ և փոփոխությամբ։

Ամբողջ աշխարհի կոմունիստական և բանվորական պարտիաները, աշխարհի բոլոր առաջադեմ մարդիկ մեծ ուրախությամբ ընդունեցին ՍՄԿՊ XX համագումարի պատմական որոշումները, որոնց բարերար ազդեցության տակ միջազգային կոմունիստական շարժումը սկսեց բուռն վերելք ապրել։

Միջազգային իմպերիալիզմը, որը կոմունիզմի դեմ մղվող պայքարում մոբիլիզացրել է իր բոլոր ուժերը, միշտ փորձում է պառակտել կոմունիստական և բանվորական պարտիաների միասնությունը, վարկաբեկել նրանց, քայքայել սոցիալիզմի լագերը և թուլացնել միջազգային կոմունիստական շարժումը այդ նպատակի համար օգտագործելով հատկապես վերջինիս զարգացման շրջադարձային մոմենտները։

Այդ տեսակետից էլ պատահական չէ, որ կոմունիզմի

Ինտերնացիոնալները հատկապես ՍՄԿՊ XX համագումարից հետո կատաղի պայքար ծավալեցին կոմունիստական շարժման դեմ։

1956—1958 թթ. հանդիսացան միջազգային կոմունիստական շարժման պատմության դժվարին և բարդ շրջանը։ Իմպերիալիզմն ամբողջ ճակատով հարձակում ծավալեց կոմունիզմի դեմ։

Կոմունիստական և բանվորական պարտիաները քայքայելու և պառակտելու, բանվորական շարժումը թուլացնելու նպատակով բուրժուական պրոպագանդան ամենից առաջ փորձեց օգտագործել ՍՄԿՊ նախաձեռնությամբ սկսված անհատի պաշտամունքի քննադատությունը, իսկ այնուհետև հունգարական դեպքերը։

Ֆալսիֆիկացիայի ենթարկելով Ի. Ստալինի պաշտամունքի և հունգարական դեպքերը, միջազգային իմպերիալիզմը մի քանի տարի շարունակ առանց խտրության օգտագործեց բոլոր կեղտոտ միջոցները, իր պրոպագանդայի բոլոր ձևերը, ձգտելով սեպ խրել ժողովրդական մասսաների և կոմունիստական պարտիաների միջև, վարկաբեկել նրանց և դրանով իսկ ջլատել միջազգային կոմունիստական շարժումը։

Հակակոմունիստական պրոպագանդայի եռուն շրջանում արգելվեցին 33 կոմունիստական և բանվորական պարտիաներ։ Որոշ երկրներում մտցվեցին հակակոմունիստական «արտակարգ օրենքներ»։ Ֆաշիստական ելույթներ սկսվեցին մի շարք երկրներում։ Հարձակումների ենթարկվեցին Ֆրանսիայի, Իտալիայի, Շվեյցարիայի և մի շարք այլ երկրների կոմունիստական պարտիաների կազմակերպությունները ու նրանց օրգանների խմբագրությունները։

Այդ տարիներին էլ ավելի ուժեղացավ բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների շահագործումը, վատացան նրանց կենսապայմանները, մեծ չափեր ընդունեց գործազրկությունը։

Ինչպես միշտ, այս անգամ ևս բուրժուազիայի հարձակումը ուղեկցվեց ռևիզիոնիստական տարրերի աշխուժացմամբ։ Մի շարք կոմունիստական և բանվորական պարտիաներում հանդես եկած ռևիզիոնիստները նորից սկսեցին «վե-

բանայիչ» մարքսիզմը, խոսել նրա «հնանալու, առանձին սկզբունքները փոխելու անհրաժեշտության մասին։

Այս հանգամանքը որոշ դժվարություններ ստեղծեց կոմունիստական պարտիաների գործունեության համար։ Բուրժուական պրոպագանդայի ազդեցության տակ կոմունիստական և բանվորական պարտիաների որոշ անկայուն, տատանվող տարրեր լքեցին պարտիաների շարքերը։

Բուրժուական պրոպագանդան, ցանկությունը ընդունելով իրականության տեղ, մեծ աղմուկ բարձրացրեց կոմունիզմի մոտալուտ «ճգնաժամի» մասին։

Սակայն բանվոր դասակարգը կոմունիստական և բանվորական պարտիաների ղեկավարությամբ ոչ միայն հակահարված տվեց իմպերիալիզմի ուժերին, այլև նոր բնագծեր նվաճեց կապիտալի դեմ մղվող պայքարում։ Փաստերը ցույց են տալիս, որ պետք է խոսել ոչ թե կոմունիզմի ճգնաժամի մասին, այլ կոմունիստական շարժման նոր, հիրավի հզոր վերելքի մասին, նրա շարքերի ամրապնդման, մասսաների վրա նրա ազդեցության ուժեղացման մասին։ Կոմունիստական շարժման հաջողությունները պատահականություն չեն, այլ հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների արդյունք։

Միջազգային զարգացման մեջ տեղի են ունեցել նոր, արմատական փոփոխություններ, որոնք կոմունիստական և բանվորական շարժման համար ստեղծել են բարենպաստ պայմաններ։

Ահա միջազգային զարգացման ժամանակակից էտապի յուրահատուկ գծերը, որոնցով և պայմանավորված է կոմունիստական շարժման զարգացման նոր առաջընթացը։

1. Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի առաջացումը և ամրապնդումը, որի ՍՍՌՄ-ի ղեկավարությամբ ձեռք բերած հաջողությունները վճռական, բարերար ազդեցություն են ունենում միջազգային կոմունիստական և բանվորական շարժման վրա։

2. Հակասությունների հետագա սրումը կապիտալիստական երկրներում, մի կողմից, բուրժուազիայի և, մյուս կող-

մից, պրոլետարիատի ու ժողովրդի մյուս աշխատավոր խավերի միջև, որոնք հանդես են գալիս իրենց երկրների կառավարողների արտաքին և ներքին քաղաքականության դեմ։

3. Նշանակալիորեն ուժեղացել է հակապատերազմական շարժումը, պայքարը ատոմային, ջրածնային զենքերի արգելման և խաղաղության համար։

4. Իմպերիալիզմի գաղութային սիստեմի քայքայումը և նոր անկախ պետությունների առաջացումը։ Միջազգային կյանքում նրանց մասնակցության ուժեղացումը։

5. Կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի ելույթների ակտիվացումը հանուն իրենց տնտեսական և մյուս իրավունքների պաշտպանության, ընդդեմ ուժեղացող շահագործման։

6. Ուժեղանում է միջազգային բանվորական շարժման միասնության տենդենցը։ Սոցիալ-դեմոկրատական պարտիաներում ավելանում է կոմունիստների հետ համագործակցելու կողմնակիցների թիվը։

7. Աճել է բանվոր դասակարգը, տեղի է ունեցել նրա մարտական կազմակերպությունների՝ կոմունիստական և բանվորական պարտիաների հետագա համախմբում և ամրապնդում, մասսաների վրա նրանց ազդեցության ուժեղացում։

Այս գործոններն են բնորոշում ժամանակակից միջազգային զարգացումը, սրանցով են պայմանավորված այն մեծամեծ հաջողությունները, որ ձեռք են բերել կոմունիստական պարտիաները կապիտալի դեմ մղվող պայքարում։

Եվ այդ պատճառով էլ պատահական չէ, որ չնայած բուրժուազիայի հարձակումը որոշ դժվարություններ ստեղծեց կոմպարտիաների համար, այնուամենայնիվ կոմունիստական շարժումը դուրս եկավ իրականս էլ ավելի ամրապնդված և համախմբված։

Այդ են ցույց տալիս ՍՄԿՊ XX համագումարից հետո տեղի ունեցած կոմունիստական և բանվորական պարտիաների համագումարները, որոնք հակահարված տալով միջազգային իմպերիալիզմին, նրա սպասարկուներին՝ ռևիզոնիստներին, հավանություն տվեցին ՍՄԿՊ XX համագումարի պատ-

մական որոշումներին։ Քննարկելով միջազգային զարգացման և իրենց երկրների ներքին կյանքի կարևորագույն հարցերը այդ համագումարները կրկին անգամ հավաստեցին իրենց հավատարմությունը մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ ուսմունքին։

Բացի համագումարներից, տեղի ունեցան կոմունիստական և բանվորական պարտիաների Կենտրոնական Կոմիտեների պլենումներ, որոնցում նույնպես քննարկվեցին կոմունիստական և բանվորական շարժման ժամանակակից էտապի հրատապ հարցերը։ Տեղի ունեցավ լարված պայքար, անցկացվեցին սուր դիսկուսիաներ։ Ամբողջ աշխարհի կոմունիստական և բանվորական պարտիաների անդամները մասնակցեցին այդ քննարկումներին։ Միջազգային իմպերիալիզմը շիկացնում էր մթնոլորտը և գործադրում իր ձեռքի տակ եղած բոլոր հնարավորությունները կոմունիստական շարժումը պառակտելու և քայքայելու համար։

Սակայն կոմունիստական և բանվորական պարտիաները այս անգամ ևս հաղթանակով դուրս եկան փորձությունից։ Հաղթահարվեցին դժվարությունները, հակահարված տրվեց օպորտունիստական տարրերին, ընդունվեցին ճիշտ, մարքսիզմ-լենինիզմի տեսությամբ հիմնավորված, ՍՄԿՊ XX համագումարի բանաձևերից բխող որոշումներ, որոնք լայն հեռանկարներ բացեցին կոմունիստական շարժման հետագա զարգացման համար։

Այդ ժամանակշրջանի բոլոր համագումարներն էլ աչքի ընկան քննարկված հարցերի տեսական բարձր մակարդակով։ Քննարկվեցին և իրենց լուծումը ստացան տարբեր երկրների պայմաններում խաղաղության, մասսաների և սոցիալիզմի համար մղվող պայքարի ձևերի հարցերը և այս բոլոր խնդիրները քննարկելիս, իհարկե, կոմունիստական ու բանվորական պարտիաները ելնում էին միջազգային իրադրության մեջ սոցիալիզմի օգտին կատարված փոփոխությունների խոր վերլուծությունից։

Իտալական Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի պլենումում ՍՄԿՊ XX համագումարի արդյունքների

մասին տված զեկուցման մեջ Պ. Տոլյատին ասաց. «ՍՄԿՊ XX համագումարի նշանակությունը ամենից առաջ կայանում է նրանում, որ նա առաջ քաշեց, քննարկեց և ընդգծեց ժամանակակից իրադրության նոր էլեմենտները, նրանում, որ նա ոչ միայն նշեց, այլև ճիշտ գնահատեց այն նորը, որ ծագել է այժմ ամբողջ աշխարհում, նրանում, որ նա կարողացավ անել գրանից բխող հիմնական եզրակացությունները»[1]: Պլենումը մեծ ուշադրությամբ լսեց և հավանություն տվեց Պ. Տոլյատիի զեկուցմանը:

Աշխարհի բոլոր կոմունիստական և բանվորական պարտիաների գործունեության համար ՍՄԿՊ XX համագումարի որոշումները անգնահատելի նշանակություն ունեցան, հակայական խթանող դեր խաղացին:

Իտալական Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի գլխավոր քարտուղար Դոլորես Իբարուրին գրում է. «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարը հանդիսանում է կարևորագույն միջազգային քաղաքական իրադարձություն: Ամերիկայում և Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում, խաղաղ օվկիանոսի կղզիներում և Ավստրալիայում, ամենուրեք մարդիկ, որոնք կրում են խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար ուշադրությամբ հետևում էին համագումարի աշխատանքներին և հավանություն տվեցին նրա որոշումներին...»[1]:

Խոսելով միջազգային բանվորական շարժման վրա ՍՄԿՊ XX համագումարի ունեցած ազդեցության մասին Ավստրիայի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի նախագահ, բանվորական շարժման վետերան Ի. Կոպլենիգը պարտիայի XVII համագումարում կատարած հաշվետու զեկուցման մեջ ասաց. «ՍՄԿՊ XX համագումարը պատմական նշանակություն ունեցավ ամբողջ միջազգային բանվորական շարժման համար, կոմունիստական և բանվորական պարտիաների, գաղութային և կախյալ երկրների ճնշված ժողովուրդների պայքարի համար: Նա կարևոր եզրակացություններ արեց երկրորդ հա-

[1] „Правда", 1956, № 73.

միջխարհային պատերազմից հետո կատարված խորը փոփոխություններից...

ՍՄԿՊ XX համագումարի մեծ արժանիքը կայանում է նրանում, որ նա նորից մեկ անգամ ընդգծեց Լենինի ուսմունքի նշանակությունը[1] յուրաքանչյուր երկրի աղգային յուրահատկությունների և տրադիցիաների համապատասխան սոցիալիզմին անցնելու տարբերության, պայմանների ու ձևերի բազմազանության մասին»[1]։

Այնուհետև նա իր զեկուցման մեջ նշեց, որ սոցիալիզմի ուժերի հետագա զարգացման համար անհրաժեշտ էր հաղթահարել դոգմատիզմը և պայքարի քարացած ու հնացած մեթոդները, վերացնել սխալները և մոլորությունները սոցիալիստական դեմոկրատիայի լրիվ ծավալման համար։ «ՍՄԿՊ-ն արեց այդ սեփական նախաձեռնությամբ. ոչ ոք նրան չհարկադրեց անելու այդ։ Նա արեց այդ, զեկավարվելով դեպի կոմունիզմ ավելի արագ շարժվելու ցանկությամբ»[2],— ասում է Ի. Կոպլենիգը։

1956—1957 թթ. տեղի ունեցած կոմունիստական և բանվորական պարտիաների համագումարներն էլ ավելի համախմբեցին և ամրապնդեցին կոմունիստական շարժումը։ Կոմունիստական և բանվորական պարտիաները մեկ անգամ ևս հաղթանակով դուրս եկան ծանր դրությունից, ցույց տալով, որ իմպերիալիզմը ի վիճակի չէ արգելակելու բանվոր դասակարգի հաղթական առաջընթացը։

1956 թ. հուլիսին Հավրում տեղի ունեցած Ֆրանսիական Կոմունիստական պարտիայի XIV համագումարում պարտիայի գլխավոր քարտուղար Մ. Թորեզը հաշվետու զեկուցման մեջ խոսելով ՍՄԿՊ XX համագումարի նշանակության և անհատի պաշտամունքի քննադատության մասին, պատգամավորների բուռն ծափահարությունների տակ ասաց. «ՍՍՌՄ-ում, ինչպես նաև ամբողջ միջազգային բանվորական շարժ-

---

[1] XVII съезд и конференция 1958 года Коммунистической партии Австрии, Госполитиздат, 1958, стр. 39—40.

[2] Նույն տեղում, էջ 40։

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան

ման մեջ Ստալինի սխալների բացահայտման կապակցությամբ, բնականաբար, նկատվեց կենդանի հուզում և մեծ դառնություն։ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն ստացավ պարտիայի և երկրի լրիվ համաձայնությունը և անվերապահ աջակցությունը սխալների ուղղման անհրաժեշտության գործում։ Բուրժուազիայի սկսած սիստեմատիկ հիստերիկ կամպանիան չկարողացավ կոմունիստական շարժման շարքերում շփոթություն առաջացնել...

Ֆրանսիայի աշխատավորների վստահությունը պատմության մեջ առաջին Սովետական պետության և նրա Կոմունիստական պարտիայի նկատմամբ ոչ միայն չտատանվեց, այլև ավելի ուժեղացավ այդ իրադարձությունների կապակցությամբ մեր սովետական ընկերների հանդես բերած արիության և բարձր քաղաքական հատկանիշների պատճառով»[1]։

Միջազգային պրոլետարիատի առանձին ջոկատները ձեռք ձեռքի տված, համարձակ կերպով սկսեցին վերացնել թույլ տրված սխալները և ուժեղ պայքար մղելով ռևիզիոնիզմի և դոգմատիզմի դեմ, ավելի ամրապնդեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա խարսխված՝ դասակարգային համառ մարտերի ընթացքում, արյան գնով նվաճված բանվորական և կոմունիստական շարժման միասնությունը։

Այն, որ կոմունիստական ու բանվորական պարտիաները հերոսաբար հաղթահարել են միջազգային իմպերիալիզմի նոր հարձակումը և այդ բարդ դրությունից դուրս եկել ավելի համախմբված և ամրապնդված, ցույց տվեցին Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 40-ամյակի տոնակատարությունը և 1957 թվականի նոյեմբերին Մոսկվայում տեղի ունեցած միջազգային երկու խորհրդակցությունները, որոնք հիրավի պատմական նշանակություն ունեցան համաշխարհային կոմունիստական ու բանվորական շարժման համար։

Մոսկվայի խորհրդակցությունների կապակցությամբ ան-

---

[1] Морис Торез. Избранные произведения, Москва, 1957, том II, стр. 355.

հրաժեշտ է կանգ առնել կոմունիստական և բանվորական պարտիաների կապերի հարցի վրա։

Բնական է, որ պրոլետարիատի շահերի իսկական արտահայտիչները՝ կոմունիստական և բանվորական պարտիաները կապիտալի դեմ մղվող պայքարում, անկախ նրանից, թե ինչ-բանք սոցիալիստական երկրում են գործում, թե կապիտալիստական, պետք է որոշակի կապեր ունենան միասնական գործողություններ մշակելու համար՝ ինչպես յուրաքանչյուր երկրի յուրահատուկ պայմաններին համապատասխան։

Սակայն կոմունիստական պարտիաները երբեք կողմնակից չեն եղել քարացած և հնացած կազմակերպչական ձևերի պահպանման ու ժամանակի պայմանների փոփոխման հետ միասին փոխել են պրոլետարիատի պարտիաների կապերի կազմակերպչական ձևերը և մեթոդները։

Միջազգային զարգացման ընթացքը ցույց տվեց, որ III ինտերնացիոնալը, որը համապատասխանում էր ժամանակի կոմունիստական և բանվորական շարժման զարգացման մակարդակին, երբ կոմունիստական պարտիաները նոր էին առաջացել և գտնվում էին աճի պրոցեսում՝ բանվորական շարժման ուժեղացման, կոմունիստական և բանվորական պարտիաների աճման և մասսայական պարտիաների վերածմանը զուգընթաց սպառում էր իրեն և այլևս չէր համապատասխանում միջազգային բանվորական ու կոմունիստական շարժման ժամանակակից պահանջներին։

Ահա այդ պատճառով էլ 1943 թ. Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործկոմի նախագահության որոշմամբ, կոմունիստական պարտիաների համաձայնությամբ Կոմինտերն լիկվիդացվեց։

Կոմունիստական Ինտերնացիոնալի լիկվիդացումից հետո միջազգային կոմունիստական շարժումը կյանքի կոչեց կոմունիստական ու բանվորական պարտիաների կապերի նոր ձև՝ Կոմինֆորմբյուրոն, որը գոյություն ունեցավ 1947—1956 թթ.։

Կոմինֆորմբյուրոն դրական դեր խաղաց Կոմունիստական Ինտերնացիոնալի լիկվիդացումից հետո առաջացած

կոմպարտիաների անջատվածությունը, մեկուսացումը վերացնելու, միջազգային կոմունիստական շարժման շարքերում պրոլետարական ինտերնացիոնալիզմը ամրապնդելու, բանվոր դասակարգին և բոլոր աշխատավորներին խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում համախմբելու գործում։ Ինֆորմբյուրոն և նրա տպագիր օրգան «За прочный мир, за народную демократию» թերթը մեծ դեր կատարեցին կոմունիստական և բանվորական պարտիաների եղբայրական կապերի զարգացման և ամրապնդման, աշխատանքի փորձի փոխանակման համար[1]։

Սակայն, միջազգային իրադրության նոր պայմանները, սոցիալիզմի մի երկրի սահմաններից դուրս գալը և համաշխարհային սիստեմի վերածվելը, «խաղաղության գոտու» ստեղծումը, որի մեջ մտնում են Եվրոպայի և Ասիայի ինչպես սոցիալիստական, այնպես էլ ոչ սոցիալիստական խաղաղասեր պետությունները, գաղութային, կախյալ և կապիտալիստական երկրների շատ կոմպարտիաների աճը և ամրապնդումը, նրանց գործունեության ակտիվացումը խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում, և վերջապես բանվորական շարժման պատակտումը հաղթահարելու անհրաժեշտությունը կյանքի կոչեցին կոմունիստական և բանվորական պարտիաների համագործակցության նոր ձևեր։ Այդ տեսակետից Կոմինֆորմբյուրոն ոչ իր «... կազմով, ոչ էլ իր գործունեության բովանդակությամբ չէր համապատասխանում նոր պայմանների պահանջներին»[2]։

Կոմինֆորմբյուրոյի մեջ մտնող Բուլղարիայի Կոմունիստական պարտիայի, Հունգարիայի Աշխատավորական պարտիայի, Իտալիայի Կոմունիստական պարտիայի, Լեհաստանի Բանվորական միացյալ պարտիայի, Ռումինիայի Բանվորական պարտիայի, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի, Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի, Ֆրանսիայի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեները կարծիքներ փոխանակելով գտան, որ այդ կազմա-

[1] „Правда", 1956, № 109.

[2] Նույն տեղում։

կերպությունը սպառել է իր դերը և փոխադարձ համաձայնությամբ որոշում ընդունեցին Կոմինֆորմբյուրոյի և նրա տպագիր օրգանի գործունեությունը դադարեցնելու մասին։

Ինչ վերաբերում է կոմունիստական և բանվորական պարտիաների կապերի հետագա ձևերի հարցին, այդ մասին ընդունված որոշման մեջ ասվում է.

«Ինֆորմբյուրոյի կազմի մեջ մտնող կոմունիստական և բանվորական պարտիաների Կենտրոնական Կոմիտեները գտնում են, որ բանվոր դասակարգի շահերի, խաղաղության գործի, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում, ծավալելով իրենց գործունեությունը՝ համապատասխան մարքս-լենինյան պարտիաների ընդհանուր նպատակների և խնդիրների և առանձին երկրների ազգային յուրահատկությունների ու պայմանների, յուրաքանչյուր պարտիա կամ պարտիայի խումբ կգտնի կապերի և կոնտակտի նոր օգտակար ձևեր»[1]։

Վերոհիշյալ կոմպարտիաների Կենտրոնական Կոմիտեները հաստատ համոզմունք էին հայտնում, որ կոմունիստական պարտիաներն իրենց հայեցողությամբ և գործունեության կոնկրետ պայմաններին համապատասխան կարծիքներ կփոխանակեն բանվորական շարժման կարևորագույն հարցերի շուրջը։

Եվ իրոք, Կոմինֆորմբյուրոյի գործունեության դադարեցումը չէր նշանակում կոմունիստական և բանվորական պարտիաների կապերի խզում, ընդհակառակն, այն լիկվիդացվեց, որովհետև ժամանակակից էտապում խանգարում էր նրանց կապերի հետագա զարգացմանը։ Անկասկած է, որ թեև կոմունիստական և բանվորական շարժումը զարգանում է ազգային շրջանակներում, սակայն դրա հետ միասին, այն իր բնույթով և բովանդակությամբ ինտերնացիոնալ է, քանի որ բոլոր պարտիաների նպատակները և շահերը ընդհանուր են։

Միջազգային զարգացման ընթացքը 1956 թ. հետո ցույց տվեց, որ տեղի ունեցած տրմատական փոփոխությունների պայմաններում կոմունիստական և բանվորական պարտիա-

[1] „Правда", 1956, № 109.

ները կանգնած են միանգամայն նիշտ դիրքերի վրա և օր օրի վրա զարգացնում են փոխադարձ կապերի ձևերն ու մեթոդները։

Կոմունիստական շարժման ժամանակակից էտապում, Կոմինֆորմբյուրոյի լիկվիդացիայից հետո, գոյություն ունեն փոխադարձ կապերի մի շարք ձևեր. երկկողմանի հանդիպումներ, որևէ հարցով շահագրգռված մի քանի կոմպարտիաների խորհրդակցություններ, կամ միջազգային խորհրդակցություններ, պարտիական պատվիրակությունների փոխանակումներ և այլն։

Կոմունիստական և բանվորական շարժման ամրապնդման և փոխադարձ կապերի զարգացման համար խոշոր իրագործություն հանդիսացան 1957 թ. նոյեմբերին Մոսկվայում տեղի ունեցած խորհրդակցությունները։

1957 թ. նոյեմբերի 14—16-ը տեղի ունեցավ սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական պարտիաների խորհրդակցություն, որին մասնակցում էին՝ Ալբանիայի Աշխատանքային պարտիայի, Բուլգարիայի Կոմունիստական պարտիայի, Հունգարիայի Սոցիալիստական բանվորական պարտիայի, Վիետնամի Աշխատավորական պարտիայի, Գերմանիայի Միասնական սոցիալիստական պարտիայի, Չինաստանի Կոմունիստական պարտիայի, Կորեայի Աշխատանքային պարտիայի, Մոնղոլիայի Ժողովրդա-հեղափոխական պարտիայի, Լեհական Միացյալ բանվորական պարտիայի, Ռումինական Բանվորական պարտիայի, ՍՄԿՊ և Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի ներկայացուցիչները։

Խորհրդակցությունում մասնակցող կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների մտքերի փոխանակությունը ժամանակակից միջազգային իրադրության, միջազգային կոմունիստական շարժման և սոցիալիստական շինարարության հարցերի շուրջը ցույց տվեց, որ քննարկված բոլոր հարցերի կապակցությամբ գոյություն ունի հայացքների միասնություն։

Խորհրդակցությունը ընդունեց Դեկլարացիա, որի մշակ-

ման ժամանակ սոցիալիստական երկրների ներկայացուցիչները կոնսուլտացիաներ ունեցան կապիտալիստական երկրների կոմպարտիաների ներկայացուցիչների հետ։

Նոյեմբերի 16—19-ը տեղի ունեցավ մի ուրիշ միջազգային խորհրդակցություն, կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցություն, որին մասնակցեցին 64 պարտիաների ներկայացուցիչներ։ Նրանք կարծիքներ փոխանակեցին ժամանակակից միջազգային դրության հրատապ հարցերի շուրջը։

Այս խորհրդակցությունը, որը միջազգային կոմունիստական և բանվորական շարժման պատմության մեջ հանդիսանում է ամենաներկայացուցչականը, մշակեց և ընդունեց խաղաղության մանիֆեստը՝ ուղղված ամբողջ աշխարհի բանվորներին և գյուղացիներին, տղամարդկանց և կանանց, ազատ կամքի բոլոր մարդկանց։

Խորհրդակցություններում ընդունված փաստաթղթերը ունեն հսկայական միջազգային նշանակություն, նրանցում ընդհանրացված է կոմունիստական և բանվորական շարժման հետպատերազմյան շրջանի աշխատանքի փորձը, կապիտալիզմից սոցիալիզմի անցման շրջանի, խաղաղության, սոցիալիզմի համար մղված պայքարի աշխատանքի փորձը, ազգային ազատագրական պայքարի փորձը։ Դեկլարացիան և խաղաղության մանիֆեստը տալով ժամանակակից իրադրության խոր վերլուծություններ, ցույց են տալիս խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարի կոնկրետ ուղիները։ Այդ ծրագրային փաստաթղթերը հստակ կերպով բացահայտում են այն խնդիրները, որոնց համար պետք է պայքարեն կոմունիստական և բանվորական պարտիաները կոմունիստական շարժման ժամանակակից էտապում։

Խորհրդակցությունները ամրապնդեցին կոմունիստական ու բանվորական պարտիաների միասնությունը և միջազգային կոմունիստական շարժումը բարձրացրին նոր աստիճանի։

Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչները ստեղծագործարար կիրառելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը՝ խորը, բազմակողմանիորեն վերլուծեցին

մարդկային հասարակության զարգացման այսօրվա պրոբլեմները և որպես կոմունիստական շարժման առաջնորդներ խնդիրներ համարեցին։

1. Պայքարը նոր համաշխարհային պատերազմի վտանգի, ատոմային զենքի արտադրության արգելման և փոքրացման դեմ։ Խորհրդակցությունը նշեց, որ երկու սիստեմների խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքը, որը էլ ավելի է զարգացվել ՍՄԿՊ XX համագումարի որոշումներում, հանդիսանում է բոլոր սոցիալիստական երկրների արտաքին քաղաքականության հիմքը։

2. Խորհրդակցությունը գտավ, որ ժամանակակից իրադրության պայմաններում կարևոր նշանակություն է ստանում. «... Սոցիալիստական պետությունների միջև, բոլոր երկրների կոմունիստական ու բանվորական պարտիաների միջև միասնության և եղբայրական համագործակցության ամրապնդումը, միջազգային բանվորական, ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժման համախմբումը»[1]։

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի մեջ մտնող պետությունների և կոմունիստական ու բանվորական պարտիաների փոխհարաբերությունների հիմքը պետք է հանդիսանան կյանքի փորձությունից պատվով դուրս եկած մարքսիզմ-լենինիզմի սկզբունքները, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները։

Խորհրդակցությունում բոլոր կոմունիստական ու բանվորական պարտիաները եկան միասնական եղրակացության այն մասին, որ սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության պրոցեսների համար բոլոր երկրներում ընդհանուր են մի շարք գլխավոր օրինաչափություններ, որոնք դրսևորվում են ամենուրեք, չնայած տարբեր երկրների սպեցիֆիկ պայմաններին, որոնք, բոլոր դեպքերում, անպայմանորեն պետք է հաշվի առնվեն։

Դեկլարացիայում ասված է. «Այդպիսի ընդհանուր օրինաչափություններ են այս կամ այն ձևով պրոլետարական ռևո-

[1] „Декларация. Манифест мира", Москва, Госполитиздат, 1958, стр. 35–36.

լյուցիայի իրականացման և այս կամ այն ձևով պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման գործում աշխատավոր զանգվածների ղեկավարումը բանվոր դասակարգի կողմից, որի կորիզը մարքս-լենինյան պարտիան է. բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հիմնական զանգվածի և աշխատավորության մյուս խավերի հետ, արտադրության հիմնական միջոցների նկատմամբ կապիտալիստական սեփականության վերացումը և հանրային սեփականության հաստատումը, գյուղատնտեսության աստիճանական սոցիալիստական վերափոխումը, ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացումը, որն ուղղված է սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման, աշխատավորների կենսամակարդակի բարձրացման նպատակին, գաղափարախոսության ու կուլտուրայի ասպարեզում սոցիալիստական ռևոլյուցիայի իրականացումը և բանվոր դասակարգին, աշխատավոր ժողովրդին, սոցիալիզմի գործին նվիրված ստվար ինտելիգենցիայի ստեղծումը, ազգային ճնշման վերացումը և ժողովուրդների միջև իրավահավասարության ու եղբայրական բարեկամության հաստատումը, արտաքին ու ներքին թշնամիների ոտնձգություններից սոցիալիզմի նվաճումների պաշտպանությունը, մյուս երկրների բանվոր դասակարգի հետ տվյալ երկրի բանվոր դասակարգի համերաշխությունը՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմը»[1]։

Ահա սրանք են այն օրինաչափությունները, որոնք հաստատվել են բանվոր դասակարգի պատմական փորձով։

3. Միջազգային զարգացման ժամանակակից էտապում «Մասսաների մարքս-լենինյան դաստիարակության ուժեղացումը, բուրժուական իդեոլոգիայի դեմ պայքարելը, սոցիալիզմի և կոմունիստական շարժման հասցեին իմպերիալիստական պրոպագանդայի ստի և զրպարտությունների մերկացումը, մատչելի և համոզիչ ձևով սոցիալիզմի, խաղաղության ու ժողովուրդների բարեկամության գաղափարների լայն պրոպագանդան առաջնակարգ նշանակություն են ստանում»[2]։

---

[1] „Декларация. Манифест мира", стр. 48—50.

[2] Նույն տեղում, էջ 16։

4. Չժխտելով և ոչ էլ դերագնահատելով ազգային յուրահատկությունները (որովհետև երկու դեպքում էլ շարաչար տուժում է պրոլետարական ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության գործը), սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչները գտան, որ անհրաժեշտ է ստեղծագործորեն կիրառել սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության ընդհանուր օրինաչափությունները յուրաքանչյուր երկրի կոնկրետ պայմաններում։

«Կյանքի փորձով ստուգված սոցիալիստական շինարարության ընդհանուր օրինաչափությունների ստեղծագործական կիրառումը և տարբեր երկրներում սոցիալիզմի շինարարության ձևերի և մեթոդների բազմազանությունը կոլեկտիվ ավանդ են մարքսիզմ-լենինիզմի թեորիայում»[1],— ասված է Դեկլարացիայում։

5. Դեկլարացիայում, որպես կոմունիստական և բանվորական պարտիաների կարևորագույն խնդիրներից մեկը, առաջ է քաշվում միջազգային կոմունիստական շարժման մեջ ռևիզիոնիզմի և դոգմատիզմի դեմ մղվող պայքարի հարցը։

Դոգմատիզմը դժվարացնում է մարքսիզմ-լենինիզմի տեսության զարգացումը և նրա ստեղծագործական կիրառումը տարբեր երկրների պայմաններում, կոնկրետ իրադրությունների ուսումնասիրումը փոխարինում է ցիտատներով և դրանով իսկ կտրում պարտիաներին լայն ժողովրդական մասսաներից։ Դեկլարացիայում ասված է, սակայն, որ «Դատապարտելով դոգմատիզմը, կոմունիստական պարտիաները ժամանակակից պայմաններում գլխավոր վտանգը համարում են ռևիզիոնիզմը, այլ կերպ ասած՝ աջ օպորտունիզմը՝ որպես բուրժուական իդեոլոգիայի դրսևորում, որը ջլատում է բանվոր դասակարգի ռևոլյուցիոն հեռանգը՝ պահանջելով պահպանել կամ վերականգնել կապիտալիզմը։ Սակայն դոգմատիզմը և ազանդավորությունը այս կամ այն պարտիայի զարգացման տարբեր էտապներում կարող են նույնպես հանդիսանալ, որ-

[1] „Декларация. Манифест мира", стр. 53—54.

պես հիմնական վտանգ։ Ամեն մի կոմպարտիա ինքն է որոշում, թե տվյալ շրջանում, որ վտանգն է հանդիսանում գլխավոր վտանգ»[1]։

6. Հետպատերազմյան շրջանում սոցիալիզմի օգտին միջազգային իրադրության մեջ կատարված փոփոխությունների հետ միասին սոցիալիզմի հաղթանակի համար ստեղծվեցին ավելի բարենպաստ պայմաններ։ Մի շարք երկրներում հնարավորություն ստեղծվեց խաղաղ կերպով իշխանություն գրավելու համար։ Այդ կապակցությամբ Դեկլարացիայում ասվում է. «Տարբեր երկրներում կապիտալիզմից սոցիալիզմին անցման ձևերը կարող են բազմազան լինել։ Բանվոր դասակարգը և նրա ավանգարդը՝ մարքս-լենինյան պարտիան ձգտում են սոցիալիստական ռևոլյուցիան իրականացնել խաղաղ եղանակով։ Այդ հնարավորության իրականացումը կհամապատասխաններ բանվոր դասակարգի և ամբողջ ժողովրդի շահերին, երկրի համազգային շահերին»[2]։

Ամեն մի երկրում սոցիալիզմին անցման այս կամ այն ձևը որոշվում է կոնկրետ պատմական պայմաններով։ Յուրաքանչյուր առանձին երկրում անցման ձևերի հարցը պետք է մշակի տվյալ երկրի Կոմունիստական պարտիան։

7. Դեկլարացիան, ելնելով ՍՄԿՊ XX համագումարի որոշումներից, հատուկ կերպով ընդգծեց, որ խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում կոմունիստական պարտիաները հանդես են գալիս սոցիալիստական պարտիաների հետ ընդհանուր ճակատ կազմելու պահանջով, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մասշտաբով։ Կոմունիստական պարտիաները այն կարծիքին են, որ իդեոլոգիայի բնագավառում գոյություն ունեցող տարաձայնությունները չեն կարող արգելակել միասնական գործողությունների հաստատմանը բանվորական շարժման առջև կանգնած մի շարք հրատապ հարցերի լուծման գործում։

8. Հատուկ ուշադրություն նվիրվեց ժամանակակից պայմաններում կոմունիստական և բանվորական պարտիաների

---

[1] „Декларация Манифест мира", стр. 57—58.

[2] Նույն տեղում, էջ 70։

կապերի հարցին։ Այդ կապակցությամբ որոշվեց, որ կոմունիստական ու բանվորական պարտիաների ղեկավար գործիչների հանդիպումների և երկկողմ հիման վրա փոխադարձ ինֆորմացիայի փոխանակման հետ միասին նպատակահարմար է, անհրաժեշտության դեպքում, անցկացնել ավելի լայն խորհրդակցություններ՝ քննարկելու բանվորական շարժման հրատապ պրոբլեմները, փորձի փոխանակման, միմյանց դիրքերին և հայացքներին ծանոթանալու, խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում միասնաբար հանդես գալու համար։ «...Պետք է կարողանալ սովորել։ Պետք է կարողանալ սովորել առջևից ընթացող Սովետական Միությունից, պետք է կարողանալ սովորել ժողովրդական դեմոկրատիայի երկրներից, պետք է կարողանալ սովորել բոլոր եղբայրական կոմպարտիաներից, պետք է կարողանալ սովորել բոլոր երկրների ժողովուրդներից»[1],—Չինաստանի Կոմունիստական պարտիայի համաշխարհային 8-րդ համագումարում ասաց Մաո Ցզե-դունը։

Բայց սովորելու, փորձի փոխանակման համար անհրաժեշտ է սերտ կապեր ունենալ, կապեր, որոնց ձևերը փոփոխվում են պատմական պայմանների փոփոխման հետ միասին։ Դեկլարացիան անհրաժեշտ գտավ ստեղծել եղբայրական կոմպարտիաների ավելի սերտ կապերի ո՛չ թե շարքոն, քարացած, այլ ժամանակի պայմաններին համապատասխան ձևեր։

Խորհրդակցությունը ընդգծեց ՍՍՌՄ առաջատար, ղեկավար դերը սոցիալիստական լագերում։ Սովետական Միությունը հանդիսանում է սոցիալիզմի լագերի ամենահզոր տերությունը։ Նրա կոմունիստական պարտիան սոցիալիզմի շինարարության 42 տարվա փորձ ունի, որի դերը հսկայական է մյուս երկրների կոմունիստական պարտիաների աշխատանքի համար։ Այդ հանգամանքը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության 40-ամյակին նվիրված հոդվածում շատ լավ է նշել Հունգարիայի Աշխատավորական պարտիայի ԿԸ-

[1] Материалы VIII Всекитайского съезда Коммунистической партии Китая, Москва, 1956, стр. 5.

խոսքը քարտուղար Յա. Կադարը, գրելով. «Այսօր, անմիջապես ՍՄԿՊ XX համագումարից հետո ծավալված դիսկուսիայից հետո, բոլորին պարզ է դարձել, որ եթե ուշադրության չառնվի Սովետական Միության հարուստ փորձը, ապա ոչ մի երկրի բանվոր դասակարգի չի հաջողվի դրավել իշխանությունը, իսկ եթե այդ արված է, ապա հնարավոր չի լինի այն պահպանել և հաջող կերպով ավարտել սոցիալիզմի շինարարությունը»[1]։

Հիրսվի պատմական նշանակություն ունեցան Մոսկվայի Նոյեմբերյան խորհրդակցությունները և նրանց ընդունած որոշումները։ Միջազգային կոմունիստական շարժումն ունենալով այդպիսի ծրագրային փաստաթղթեր, որտեղում արվում է նրա խնդիրների և նպատակների հստակ շարադրանքը, էլ ավելի համախմբված և ամրացած կապիտալի դեմ մղվող մարտերում, նորանոր հաջողությունների է հասնում։

Կոմունիստական և բանվորական պարտիաները հավանություն տվեցին Մոսկվայում ընդունված փաստաթղթերին, անվերապահորեն ընդունելով, որ դրանք խոշոր, վճռական նշանակություն ունեն միջազգային կոմունիստական շարժման զարգացման, նրա ամրապնդման և առաջընթացի համար։

Սոցիալիստական և կապիտալիստական երկրների կոմունիստական ու բանվորական պարտիաները Դեկլարացիան և խաղաղության մանիֆեստը լայն կերպով քննարկեցին։ Տեղի ունեցան կոմունիստական և բանվորական պարտիաների կենտրոնական կոմիտեների պլենումներ՝ նվիրված խորհրդակցությունների արդյունքների քննարկմանը։ Բացի պլենումներից, այդ պատմական փաստաթղթերը քննարկվեցին նաև պարտիական ակտիվների և աշխատավորների բազմամարդ ժողովներում ու մամուլում։

1957 թ. տեղի ունեցած ՍՄԿՊ Դեկտեմբերյան պլենումում Նոյեմբերյան խորհրդակցությունների մասին ընդունված որոշման մեջ ասված է. «ՍՄԿՊ Կենտկոմի պլենումը նշում է, որ կոմունիստական ու բանվորական պարտիաների ներկա-

[1] Я. Кадар, Праздник всего прогрессивного человечества. Международная жизнь, № 11, 1957, стр. 27.

յայտնիչների՝ 1957 թ. նոյեմբերին Մոսկվայում տեղի ունեցած խորհրդակցությունների աշխատանքը և որոշումները համաշխարհային կոմունիստական շարժման խոշորագույն հաջողություններն են։ Խորհրդակցությունները համոզիչ կերպով ցուցադրեցին սոցիալիստական լագերի և ամբողջ միջազգային կոմունիստական շարժման հետագա համախմբումը մարքսիզմ-լենինիզմի գաղափարական հիմքի վրա։

Համաշխարհային պատմության ժամանակակից էտապում խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի համար մղվող պայքարում կոմունիստների կարևորագույն խնդիրների մշակումը և հռչակումը, ամբողջ միջազգային կոմունիստական շարժման համախմբումը և կոմպարտիաների կապերի հետագա ամրապնդումը խորհրդակցությունների կարևորագույն արդյունքներն են»[1]։

ՍՄԿՊ Կենտկոմի պլենումը որոշեց.

1. Լիովին հավանություն տալ Խորհրդակցությունների ընդունած պատմական փաստաթղթերին։

2. Հավանություն տալ կոմունիստական ու բանվորական պարտիաների Խորհրդակցություններում ՍՄԿՊ պատվիրակության գործունեությանը։

3. Պարտիական կազմակերպություններին առաջարկել պարտիայի բոլոր անդամներին և աշխատավորներին լայնորեն պարզաբանել կոմունիստական և բանվորական պարտիաների Խորհրդակցությունների նշանակությունը և նրանց ընդունած փաստաթղթերի բովանդակությունը։

Չինաստանի կոմունիստական պարտիայի VIII համագումարի երկրորդ սեսիայի բանաձևում նշված է. «Դեկլարացիան հանդիսացավ տարբեր երկրների կոմունիստական պարտիաների համերաշխության իդեա-քաղաքական հիմքը և ուժեղացրեց Սովետական Միության կողմից ղեկավարվող սոցիալիստական լագերի համախմբվածությունը։

Այդ ծրագրային փաստաթուղթ է, որը նոր դարաշրջան է բացում միջազգային կոմունիստական շարժման մեջ»։

---

[1] «Սովետական Հայաստան», 1957, № 296։

Ֆրանսիական կոմունիստական պարտիայի 1957 թ. դեկտեմբերին տեղի ունեցած պլենումը, որը նվիրված էր Դեկլարացիայի և խաղաղության մանիֆեստի քննարկմանը, իր ընդունած որոշման մեջ ասում էր. «Մեկ տարի առաջ բուրժուազիան, նրա մամուլը, ռադիոն, սոցիալիստական պարտիայի ղեկավարները և անգամ մեր շարքերում գտնվող որոշ օպորտունիստական տարրեր աղմկում էին կոմունիզմի ճգնաժամի մասին։

Անցել է 12 ամիս։ Այսօր և՛ բարեկամները և՛ թշնամիները պետք է ընդունեն կոմունիզմի ուժը ու նոր առաջադրումը և առաջին հերթին ՍՍՌՄ-ի ղեկավարությամբ սոցիալիստական երկրների միասնականությունը»[1]։

Երբեմն ձայներ են լսվում այն մասին, թե կոմունիստական, բանվորական շարժման համար ստեղծված դժվարությունները հետևանք էին ՍՄԿՊ XX համագումարի որոշումների և որ հարկ չկար հարցը այդպես սուր կերպով դնելու։ Սակայն, այդպես մտածողները մոռանում են, որ սքողելով թերությունները, թույլ տրված սխալները, հնարավոր չէ նոր հաջողություններ ձեռք բերել։ Կոմունիստները միշտ էլ աչքի են ընկել սեփական սխալների անողոք քննադատությամբ։

1959 թ. դեկտեմբերի 1-ին, Հունգարիայի Սոցիալիստական Բանվորական պարտիայի VII համագումարում Ն. Ս. Խրուշչովը անդրադառնալով այդ հարցերին ասաց. «Հասարակական կյանքում և Կոմունիստական պարտիաների գործունեության մեջ բարդ երևույթներ կարող են լինել նաև սոցիալիստական երկրներում։ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարից հետո մի քանի պարտիաներ, այդ թվում նաև մեր պարտիան, որոշակի դժվարություններ ապրեցին։ Բայց ամեն ինչ կախված է օրգանիզմի ամրությունից, այն բանից, թե նա որքանով է ընդունակ դիմադրելու հիվանդությանը։ Սովետական Միության Կոմունիստական պարտիան առաջինը դուրս եկավ անհատի պաշտամունքի ծնած բոլոր արատների համարձակ ու խիստ դատապարտման օրինակ։ Եվ դա ճիշտ է, թեև ոմանք ասում

[1] „Правда", 1957, № 341.

էին, թե սոցիալիստական երկրների հասարակական կյանքում առաջացած որոշ բարդություններ դալիս են մեր պարտիայի XX համագումարից, թե հարկ չկար հարցն այդպես սուր դնել։

Ոչ, ընկերներ, դա անհրաժեշտ էր անել։ Հարկավոր էր մաքրվել և ազատվել այդ ամբողջ տհաճ բեռից։ Ինչպես նկարիչը կտավը պայծառացնելու համար երբեմն պետք է վերացնի ժամանակի նստվածքները, այնպես էլ մենք պետք է որոշ բաներ մաքրենք՝ ցույց տալու համար ստեղծագործական մարքսիզմ-լենինիզմի իսկական դեմքը։ Կրկնում եմ, բոլոր պարտիաները տարբեր չափով ապրել են այդ տենդը, բայց այդ տենդից հետո մեր օրգանիզմը ավելի ամրացավ, և մենք ավելի վստահորեն ենք գնում Մարքսի, Էնգելսի, Լենինի ցույց տված ուղիով, գնում ենք առաջ, դեպի կոմունիստական հասարակարգի կառուցումը»[1]։

Եվ իրոք, փաստերը ցույց են տալիս, որ կոմունիստական և բանվորական շարժումը ոչ թե քայքայվում է, ինչպես ազմկում են իմպերիալիզմի փաստաբանները, այլ ընդհակառակը, ՍՄԿՊ XX համագումարի և Նոյեմբերյան խորհրդակցությունների որոշումներով էլ ավելի հարստացած ու դոտեպընդված զարդանում է արագ կերպով, կապիտալի դեմ մղվող մարտերում ձեռք բերելով նորանոր հաջողություններ։

Բանվոր դասակարգը կոմունիստական և բանվորական պարտիաների ղեկավարությամբ այսօր հերոսական մարտեր է մղում միջազգային իմպերիալիզմի դեմ հանուն խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի։

Դեկլարացիայի այն միտքը, որ «եթե սոցիալիզմը վերելք է ապրում, ապա իմպերիալիզմը գնում է դեպի անկում» ապացուցվում է ոչ միայն տեսականորեն, այլև պրակտիկայում, սոցիալիստական և կապիտալիստական երկրների տնտեսական զարգացման ներկա տեմպերի իրական համեմատությամբ։

Այն ժամանակ, երբ սոցիալիզմի լագերի երկրները կոմունիստական և բանվորական պարտիաների առաջնորդու-

[1] «Սովետական Հայաստան», 1959, № 283։

թյամբ մեծ վերելք են ապրում իրենց կյանքի բոլոր բնագավառներում, կապիտալիստական աշխարհը ապրում է նոր ցնցումներ, նոր ճգնաժամեր, նրա հիմքերը խարխլող անտագոնիստական հակասությունները ավելի ու ավելի են սրվում և խորանում։ Կյանքը հերքում է կապիտալիզմի փոխվելու, «ժողովրդական» դառնալու, «դասակարգերի համերաշխության և համագործակցության» և այլնի մասին իմպերիալիզմի ջատագովների սնանկ տեսությունները։ Ճշմարտության չափանիշը պրակտիկան է։ Իսկ պրակտիկան, կապիտալիստական երկրների այսօրվա դրությունը միայն հաստատում է մարքսիզմ-լենինիզմի ճշմարտացիությունը։

ԱՄՆ-ի արդյունաբերության արտադրական հզորության մոտ 12% չի օգտագործվում։ Վատանում է աշխատավորների դրությունը։ Գործազուրկների թիվը ժամանակ առ ժամանակ մի քանի միլիոն մարդու է հասնում։ Ճգնաժամային երևույթները չեն դադարում ԱՄՆ-ում, Արևմտյան Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Ճապոնիայում, Բելգիայում և կապիտալիստական այլ երկրներում։ Կրճատվում է արդյունաբերության արտադրանքը, ավելանում է գործազուրկների թիվը։ Իտալիայում կա 2 միլիոն գործազուրկ, Արևմտյան Գերմանիայում՝ 588 հազար, Անգլիայում՝ 600 հազար, Կանադայում՝ 537 հազար, Ֆրանսիայում՝ 200 հազար, Չիլիում՝ 250 հազար, Ճապոնիայում՝ մոտ 10 միլիոն, Հարավային Կորեայում՝ 6,6 միլիոն գործազուրկ։ 1959 թ. գործազուրկների թիվը հասնում էր Բելգիայում՝ 170 հազարի, Հոլանդիայում՝ 128, Ավստրիայում՝ 228, Հունաստանում՝ 220, Շվեդիայում՝ 73, Նորվեգիայում՝ 107 և Ֆինլանդիայում 100 հազարի։

Համաձայն պաշտոնական տվյալների կապիտալիստական 9 առաջավոր երկրներում 1960 թ. սկզբներին գործազրկությունից տառապում էր ավելի քան 30 միլիոն մարդ։

Պատահական չէ, որ գործազրկությունը անվանում են ազգային թշվառություն։

Պետք է նշել, որ կապիտալի աշխարհում ժամանակակից գործազրկությունը ոչ բոլոր դեպքերում է կապված ճգնաժամային երևույթների և արդյունաբերության արտադր-

բանի կրճատման հետ։ Մի շարք երկրներում արդյունաբերական արտադրանքը չկրճատվելու կամ նույնիսկ որոշ չափով ավելանալու դեպքում գործազրկությունը մնում է նույն մակարդակի վրա։ Դա բացատրվում է արտադրության ավտոմատիզացումով և արդյունաբերության բնագավառում կատարված նոր կատարելագործումներով, որոնք ավելի են սրում կապիտալի և աշխատանքի միջև գոյություն ունեցող հակասությունները։ Այդ է հաստատում արդյունաբերապես զարգացած կապիտալիստական երկրների իրականությունը։ Հիմնական ժխտվում են կապիտալիզմի երկրպագուների և նրանց ձայնակցող ռևիզիոնիստների այն պնդումները, թե իբր ավտոմատացման և տեխնիկական պրոգրեսի հետ միասին վերջանում է դասակարգային հակամարտությունների դարաշրջանը և սկսվում դասակարգային ներդաշնակության ժամանակաշրջանը։ Ընդհակառակը, տեղի է ունենում ոչ թե դասակարգային պայքարի թուլացում, այլ հետագա ուժեղացում, ոչ թե լուծվում են կապիտալիզմի հակասությունները, այլ ավելի են խորանում։

Խոշորագույն կապիտալիստական երկրների իրականությունը վկայում է նաև այն մասին, որ ընդհակառակը, տեխնիկական պրոգրեսի և ավտոմատացման հետ միասին էլ ավելի է ուժեղանում բանվոր դասակարգի շահագործումը, վատանում է նրա դրությունը, իջնում է աշխատավորության կենսամակարդակը։

Ահա թե ինչու հատկապես վերջին տարիներս ուժեղացել է բանվոր դասակարգի գործադուլային պայքարը հանուն իր իրավունքների պաշտպանության։

1959 թ. և 1960 թ. սկզբներին կապիտալիստական երկրների աշխատավորների գործադուլային շարժումը հասավ վերջին տասը տարվա ընթացքում ամենաբարձր մակարդակին։

Վերջին երեք տարիների ընթացքում ՍՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում և Ճապոնիայում, պաշտոնական վիճակագրության տվյալներով, որոնք անկասկած խիստ պակասեցված են, տեղի է ունեցել 30 հազար գործադուլ, որին մասնակցել է մոտ 15 միլիոն մարդ։

Իտալիայում 1956 թ. տեղի է ունեցել 1904 գործադուլ, որին մասնակցել է 1,7 միլիոն մարդ, 1957 թ.՝ 1849 գործադուլ, որին մասնակցել է 2,1 միլիոն մարդ, 1958 թ. տեղի ունեցած գործադուլներին մասնակցել է 8 միլիոն մարդ։ Դա վերջին հինգ տարիների ընթացքում գործադուլավորների ամենամեծ թիվն է, որ տեսել է Իտալիան։ 1959 թ. գործադուլային շարժումն ավելի ուժեղացավ։ Գործադուլներից ուշադրավ էին Իտալիայի քիմիական արդյունաբերության 200 հազար բանվորների և գյուղացիների 48 ժամ տևած գործադուլը, ցեմենտի արդյունաբերության բանվորների գործադուլը, քաղաքային տրանսպորտի աշխատողների 100 հազարանոց գործադուլը, «պայքարի օրը», որին մասնակցեցին 2 միլիոն հոգի։ Հատկապես աչքի ընկավ մետալուրգների 24 ժամանոց գործադուլը, որին մասնակցեցին մոտ 1 միլիոն մարդ։ Այդ գործադուլը Իտալիայի բանվորական շարժման պատմության մեջ եղած ամենամեծերից մեկն էր։ 1959 թ. Իտալիայում տեղի ունեցած գործադուլներին մասնակցել է մոտ 5 միլիոն մարդ։

Անգլիայում 1956 թ. տեղի ունեցավ 2648 գործադուլ, իսկ 1957 թ. 2855 գործադուլ, վերջինիս մասնակցում էին 1 միլիոն 358 հազար մարդ։ 1959 թ. գործադուլային շարժումն ավելի մեծ թափ ընդունեց՝ ընդգրկելով պոլիգրաֆիկ, ավտոմոբիլային և արդյունաբերության այլ ճյուղեր։

ԱՄՆ-ում նույնպես արագ կերպով աճում է գործադուլային շարժումը։

1956 թ. տեղի ունեցավ պողպատաձուլական արդյունաբերության բանվորների հսկայական գործադուլը, որին մասնակցում էին 650 հազար հոգի։ Իր բնույթով աչքի էր ընկնում 5 ամիս տևած «Վեստինգհաուզ» ընկերության էլեկտրիկների գործադուլը, որը արհմիութենական մամուլը գնահատեց որպես ավտոմատացման դեմ ուղղված առաջին գործադուլը։ 1956 թ. վերջին և 1957 թ. սկզբին տեղի ունեցավ ԱՄՆ-ի բոլոր նավահանգիստների բանվորների գործադուլը։ 1957 թ. ԱՄՆ-ում տեղի ունեցավ 3673 գործադուլ, որին մասնակցեցին 1390 հազար մարդ։ Գործադուլի պատճառով կորած

բանվորական օրերի թիվը հասավ 16,5 միլիոնի։ 1958 թ. ԱՄՆ-ում տեղի ունեցավ 5025 գործադուլ, որին մասնակցում էին 2200 հազար մարդ։ 1959 թ. տեղի է ունեցել 3900 գործադուլ, որին մասնակցեցին 1895 հազար մարդ։ 116 օր տևեց ԱՄՆ-ի սև մետալուրգիայի բանվորների 500 հազարանոց գործադուլը՝ ուղղված 12 ընկերությունների դեմ, որոնք տալիս են ԱՄՆ-ի պողպատի համարյա 90%։ Գործադուլների պատճառով կորած բանվորական օրերի քանակը հասավ 68 միլիոնի, որը երեք անգամ ավելի է 1958 թ. կորցրած բանվորական օրերի քանակից։

1958 թ. Արևմտյան Գերմանիայում գործադուլային շարժման մեջ ընդգրկվեցին 1483 ձեռնարկությունների բանվորներ։ 1959 թ. սկզբներին Արևմտյան Գերմանիայում գործադուլավորների թիվն անցավ 200 հազարից, իսկ 1957 թ. 45 հազարի փոխարեն այն աճեց 18 անգամ։

Ճապոնիայում 1958 թ. տեղի է ունեցել 1864 գործադուլ՝ 6,363,407 մարդու մասնակցությամբ։

Գործադուլային շարժումը լայն թափ է ընդունել նաև Լատինական Ամերիկայի երկրներում։ Արգենտինայում 1957 թ. հոկտեմբերին տեղի ունեցած հսկայական գործադուլին մասնակցեցին 4 միլիոն բանվոր։ Այդպիսի գործադուլ Լատինական Ամերիկայի երկրները իրենց պատմության ընթացքում չէին տեսել։ 1959 թ. Արգենտինայում տեղի է ունեցել երեք գործադուլ, որին մասնակցել են 12 միլիոն մարդ։

1959—1960 թթ. գործադուլային շարժումը աչքի է ընկնում հետևյալ առանձնահատկություններով.

1. Արտասովոր լայն թափով և մարտական բնույթով։

2. Բանվոր դասակարգի շարքերում նկատվող միասնական գործողությունների ամրապնդմամբ և ուժեղացմամբ։ Բոլոր խոշոր գործադուլների ժամանակ կոմունիստները, սոցիալիստները, կաթոլիկները և անպարտիականները հանդես են գալիս միասին։

3. Քաղաքական գործադուլների աճով, աշխատավորների բազմաթիվ ելույթներով դեմոկրատական ազատությունների և

միջազգային պրոլետարիատի տարբեր ջոկատների համերաշխության պաշտպանությամբ[1]։

Փաստերը ցույց են տալիս, որ օրավուր բարձրանում է բանվոր դասակարգի դասակարգային գիտակցությունը, ավելի ու ավելի է ուժեղանում իր իրավունքները պաշտպանելու վճռականությունը։

Կոմունիստական և բանվորական պարտիաները դեկավարելով կապիտալի դեմ մղվող մարտերը, ավելի սերտ կապեր են հաստատում ժողովրդական լայն մասսաների հետ, պրակտիկայում ապացուցելով, որ աշխատավոր մասսաների շահերի ամենանվիրված արտահայտիչները կոմունիստներն են։

1956—1960 թթ., չնայած «կոմունիզմի ճգնաժամի» մասին բուրժուական պրոպագանդայի հերյուրանքներին, հանդիսացան կոմունիստական և բանվորական պարտիաների աճի և հեղինակության հետագա ամրապնդման տարիներ։

Կոմունիստական և բանվորական շարժումը էլ ավելի զարգացավ հատկապես Մոսկվայի Նոյեմբերյան խորհրդակցություններից հետո, որի ապացույցը հանդիսացան սոցիալիստական երկրների զարգացման ընդգծվառում ձեռք բերած ցայտուն ցուցանիշները, կոմունիստական շարժման ամրապնդումը, բանվորական շարժման ուժեղացումը և կոմունիստական ու բանվորական պարտիաների հեղինակության մեծացումը։

Նոյեմբերյան խորհրդակցություններից հետո տեղի ունեցան մի շարք կոմպարտիաների համագումարները և պլենումները, Եվրոպայի 15 կոմունիստական ու բանվորական պարտիաների խորհրդակցությունը և Եվրոպայի կապիտալիստական երկրների կոմունիստական պարտիաների ներկայացուցիչների հանդիպումը, որոնք հանդիսացան միջազգային կոմունիստական շարժման ամրապնդման և հաջողությունների վառ ցուցադրումը։

---

[1] Б. Пономарев. К новым победам сил мира и социализма. „Правда", 1960, № 122.

Հատկապես նշանակալի երևույթ էր Եվրոպայի 15 կոմունիստական և բանվորական պարտիաների խորհրդակցությունը, որը հրավիրվեց Գերմանիայի Կոմունիստական պարտիայի նախաձեռնությամբ 1958 թ. հունիսի 27—29-ը։ Նրան մասնակցում էին՝ Բելգիայի, Դանիայի, ԳԴՌ-ի, ԳՖՌ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Լյուքսեմբուրգի, Նիդերլանդների, Նորվեգիայի, Ավստրիայի, Լեհաստանի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Չեխոսլովակիայի կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչները։

Խորհրդակցությունում մարերի փոխանակություն տեղի ունեցավ ամերիկյան և գերմանական իմպերիալիզմի կողմից Եվրոպային սպառնացող պատերազմի վտանգին դիմադրավելու հարցերի շուրջը։ Խորհրդակցության մասնակիցների հրապարակած հայտարարության մեջ ընդգծվում էր Հյուսիս-Atլանտյան բլոկի մասնակից պետությունների պատերազմի նախապատրաստության վտանգավոր քաղաքականության՝ մարդկության սպառնացող ահավոր հետևանքները։ Առանձնապես բացահայտվում էր Գերմանիայի վերազինման նրանց միլիտարիստական միջոցառումների ագրեսիվ նպատակները։ Հայտարարության մեջ ասվում է. «Բանվոր դասակարգի համատեղ գործունեությունը լայն ժողովրդական մասսաների և այն բոլոր ուժերի հետ, որոնք մերժում են ատոմային սպառազինման մրցավազքը, ամերիկյան և գերմանական իմպերիալիզմի ավանտյուրիստական քաղաքականությունը, խաղաղության համար մղվող համաշխարհային շարժումը, որը հենվում է մի այնպիսի կարևոր ֆակտորի վրա, որպիսին է սոցիալիստական լագերը, ռևալ հեռանկարներ են բացում Եվրոպայի ժողովուրդների նյութական և հոգևոր արժեքների պաշտպանության և խաղաղության ապահովման գործում»[1]։

1959 թ. նոյեմբերի 21—24-ը Հռոմում տեղի ունեցավ Գրամշիի ինստիտուտի նախաձեռնությամբ հրավիրված Եվրոպայի կոմունիստական պարտիաների ներկայացուցիչների

[1] „Правда", 1958, № 187.

միջազգային հանդիպումը՝ նվիրված Եվրոպայում կապիտալիզմի զարգացման պրոբլեմներին։

Այդ հանդիպմանը մասնակցող կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչները մտքերի լայն փոխանակություն ունեցան խաղաղության, դեմոկրատիայի և աշխատավորության բարեկեցության համար մղվող պայքարում բանվոր դասակարգի և ժողովրդական մասսաների միասնության հարցերի շուրջը։ Մտքերի փոխանակությունից հետո խորհրդակցությունում ընդունվեց մի կոչ՝ «Եվրոպայի կապիտալիստական երկրների կոմունիստական պարտիաների դիմումը բոլոր աշխատավորներին, բոլոր դեմոկրատներին» խորագրով, որը միջազգային մեծ նշանակություն ունեցող ուշագրավ փաստաթուղթ է։ Դիմումում Եվրոպայի կապիտալիստական երկրների կոմունիստական պարտիաների ներկայացուցիչները, ելնելով միջազգային զարգացման ներկա էտապի խոր վերլուծությունից, նշում էին, որ շնորհիվ խաղաղության համար Սովետական Միության, սոցիալիստական լագերի մյուս բոլոր երկրների, կապիտալիստական երկրների պրոգրեսիվ ուժերի համառ ու հետևողական պայքարի, միջազգային իրադրության մեջ տեղի են ունեցել զգալի փոփոխություններ։ Սառը պատերազմի սառույցների մեջ ճեղքվածքներ են առաջացել։

Եվրոպական կոմունիստները որպես օրվա առաջնահերթ խնդիրներ առաջ քաշեցին հետևյալ հարցերը. բարձր մակարդակի խորհրդակցության գումարումը, գերմանական պրոբլեմի լուծումը, օտարերկրյա ռազմական բազաների վերացումը, Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի ճանաչումը և այլն։ «Եվ ամենից առաջ բարձրացնենք մեր ձայնը, մեր ջանքերը միացնենք աշխարհի բոլոր ժողովուրդների ջանքերին՝ նպատակ ունենալով հասնել ընդհանուր ու լրիվ զինաթափման։ Առաջին հերթին հասնենք ատոմային զենքի արգելմանը, նրա փորձարկման վերջնական դադարեցմանը, որը թունավորում է մթնոլորտը...»[1]—ասվում է կոչում։

---

[1] „Проблемы мира и социализма", 1960, № 1, стр. 50.

Խորհրդակցությունում միաժամանակ նշվեց, որ կապիտալիստական մոնոպոլիաները օգտագործելով «սառը պատերազմը», իսկ որոշ երկրներում շովինիզմի և գաղափարախոսության ոգին, հարձակում են գործում աշխատավորների իրավունքների վրա։ Իսպանիայում և Պորտուգալիայում դեռևս շարունակում է գոյություն ունենալ ֆաշիստական դիկտատուրան։ Հունաստանում ռեակցիոն ռեժիմը հալածում է դեմոկրատներին, իսկ Արևմտյան Գերմանիայում արգելված են կոմունիստական պարտիան և դեմոկրատական այլ կազմակերպություններ։ Վերոհիշյալ երկրներում նկատվող պրոցեսը այս կամ այն ձևով արտահայտվում է նաև աշխարհի շատ ու շատ երկրներում՝ լուրջ վտանգ ստեղծելով դեմոկրատիայի գոյության և զարգացման համար։

Ահա այդ է պատճառը, որ դիմումում Եվրոպայի բանվոր դասակարգին, բոլոր դեմոկրատական ուժերին և առաջին հերթին սոցիալ-դեմոկրատներին կոչ է արվում միավորել ուժերը հանուն աշխատավոր ժողովրդի պահանջների և շահերի պաշտպանության, որովհետև փորձը ցույց է տալիս, որ պրոգրեսիվ ուժերը միայն միասնության դեպքում կարող են լուրջ հաջողություն ձեռք բերել՝ ռեակցիային ստիպելով նահանջել։

Կոմունիստական պարտիաների այդ խորհրդակցությունը հիրավի մեծ նշանակություն ունեցավ Եվրոպայի դեմոկրատական ուժերի համախմբման և խաղաղության, առաջադիմության ու սոցիալիզմի համար պայքարող աշխատավորական զանգվածներին համախմբելու գործում։

Միջազգային կոմունիստական շարժման զարգացման գործում մեծ նշանակություն ունեցավ 1960 թ. հունիսին Բուխարեստում տեղի ունեցած սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական պարտիաների՝ Ալբանիայի Աշխատանքային պարտիայի, Բուլղարիայի Կոմունիստական պարտիայի, Հունգարիայի Սոցիալիստական բանվորական պարտիայի, Վիետնամի Աշխատավորների պարտիայի, Գերմանիայի Սոցիալիստական միասնական պարտիայի, Չինաստանի Կոմունիստական պարտիայի, Կորեայի Աշխա-

տանքային պարտիայի, Մոնղոլիայի ժողովրդա-ռևոլյուցիոն պարտիայի, Լեհաստանի Միացյալ բանվորական պարտիայի, Ռումինիայի Բանվորական պարտիայի, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի, Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի ներկայացուցիչների խորհրդակցությունը, որտեղ կարծիքներ փոխանակվեցին արդի միջազգային դրության հրատապ հարցերի և եղբայրական պարտիաների համար դրանցից բխող հետևությունների շուրջը։

Խորհրդակցության մասնակիցները, Բուխարեստի հանդիպման վերաբերյալ Կոմյունիկեում միահամուռ այն հետևությանը հանդեցին, որ միջազգային իրադարձությունների և համաշխարհային սոցիալիստական սիստեմի երկրների զարգացման ամբողջ ընթացքը լիովին հաստատեց 1957 թ. նոյեմբերին Մոսկվայում կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների ընդունած Դեկլարացիայի և խաղաղության մանիֆեստի մարքս-լենինյան դրույթների ճշտությունը։ Խորհրդակցության մասնակիցները հաստատեցին իրենց հավատարմությունը այն սկզբունքներին, որոնք շարադրված են արդի կոմունիստական և բանվորական շարժման խարտիայում, խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար նրա պայքարի ծրագիրը հանդիսացող Դեկլարացիայում և խաղաղության մանիֆեստում։

Խորհրդակցությունում գլխավոր ուշադրությունը դարձվեց՝ պատերազմի և խաղաղության, երկու սիստեմների փոխհարաբերությունների և կապիտալիստական երկրների սոցիալիզմին անցման ձևերի հարցերին։ Խորհրդակցության մասնակիցները հայտարարեցին, որ նաև արդի իրադրության նկատմամբ լիովին կիրառելի են Դեկլարացիայի և խաղաղության մանիֆեստի բոլոր հետևությունները, որոնք վերաբերում են տարբեր սոցիալական կարգ ունեցող երկրների խաղաղ գոյակցությանը, մեր դարաշրջանում պատերազմները կանխելու հնարավորությանը, պատերազմի վտանգի նկատմամբ ժողովուրդների զգոնությունը պահպանելու անհրաժեշտությանը, քանի որ իմպերիալիզմի տակ գտնվող երկրներում հող է մնում ագրեսիվ պատերազմների համար։ Վե-

գոհիշյալ հետևությունները արված են արդի դարաշրջանի վիճակի և զարգացման տենդենցների խորը անալիզի հիման վրա, բխում են մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական ոգուց ու դնել են ամբողջ միջազգային կոմունիստական և բանվորական շարժման լիակատար հավանություն։

Կոմունիստական և բանվորական պարտիաները հավատարիմ մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական ոգուն և կանգնած խաղաղության պաշտպանության դիրքերում վճռական պայքար են մղում ժամանակակից ռևիզիոնիզմի և դոգմատիզմի դեմ, որոնք արգելակում են սոցիալիզմի հզոր լաների առաջընթացը։

Խաղաղության համար մղվող պայքարը կոմունիստական և բանվորական պարտիաները համարում են իրենց առաջնակարգ խնդիրը։ Նրանք բոլոր խաղաղասեր ուժերի հետ միասին իրենցից կախված ամեն ինչ անում են, որպեսզի կանխեն պատերազմը, նշված է 1957 թ. Մոսկվայում ընդունված Դեկլարացիայում։ Այդ միտքը, որպես չափազանց ակտուալ և իր ուժը չկորցրած, ընդգծված է նաև Բուխարեստի խորհրդակցության Կոմյունիկեում։

Կոմունիստական պարտիաները ինչպես 1957 թ. Դեկլարացիայում, այնպես էլ Բուխարեստի Կոմյունիկեում նշեցին, որ արդի պայմաններում կապիտալիստական մի շարք երկրներում բանվոր դասակարգը իր առաջավոր ջոկատի գլխավորությամբ հնարավորություն ունի ընդհանրացնելու ռեակցիոն ուժերի դիմադրությունը և ստեղծելու սոցիալիստական ռևոլյուցիայի խաղաղ իրականացման անհրաժեշտ պայմաններ։ Դրա հետ միասին կոմունիստական պարտիաները ելնում են նաև սոցիալիզմին ոչ խաղաղ կերպով անցնելու հնարավորությունից։

Խորհրդակցության մասնակիցները նշեցին, որ սոցիալիզմի լագերը գտնվում է իր ուժերի ծաղկման շրջանում և մեծ ազդեցություն ունի մարդկության զարգացման ամբողջ ընթացքի վրա։

Ելնելով այն ճիշտ դրույթից, որ համաշխարհային սոցիալիստական սիստեմի ուժը սոցիալիստական երկրների

ժողովուրդների համախմբվածությունն ու սոցիալիզմի լագերի միասնությունն է, Բուխարեստի խորհրդակցության մասնակիցները հայտարարեցին, որ «կոմունիստական և բանվորական պարտիաները այսուհետև էլ կամրապնդեն համաշխարհային սոցիալիստական սիստեմի երկրների համախմբվածությունը, աչքի լույսի պես կպահպանեն իրենց միասնությունը խաղաղության և բոլոր ժողովուրդների անվտանգության, մարքսիզմ-լենինիզմի մեծ գործի հաղթանակի համար մղվող պայքարում»[1]։

Կապիտալիստական երկրների կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչները, որոնք որպես հյուրեր ներկա էին Ռումինիայի Բանվորական պարտիայի երրորդ համագումարին, միահամուռ կերպով պաշտպանեցին և հավանություն տվեցին սոցիալիստական երկրների կոմունիստական պարտիաների կողմից ընդունված Կոմյունիկեին։

Բուխարեստի խորհրդակցությունում ընդունված Կոմյունիկեն դառավ միջազգային կոմունիստական շարժման, սոցիալիստական լագերի ժողովուրդների և ամբողջ առաջադիմական մարդկության հավանությունն ու պաշտպանությունը, որովհետև այն լիովին բխում է մեր դարաշրջանի զարգացման օբյեկտիվ օրենքներից և ճշտորեն լուծում է ժամանակակից կոմունիստական շարժման առջև կանգնած հիմնական խնդիրները։

Միջազգային կոմունիստական և բանվորական շարժման վերելքի պայմաններում 1959 թ. հունվարին տեղի ունեցավ ՍՄԿՊ XXI արտահերթ համագումարը, որը հանրագումարի բերելով միջազգային իրադրության մեջ կատարված փոփոխությունները, նշեց, որ իմպերիալիզմի հարձակումը կանգնված է, իմպերիալիզմին չի հաջողվել պառակտել կոմունիստական շարժման շարքերը, զսպել այդ պարտիաների հեղինակությունը, կտրել նրանց լայն մասսայական շրջաններից։

ՍՄԿՊ XXI համագումարին ներկա էին 70 կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչներ, որոնք

[1] „Правда", 1960, № 180.

մասնակցեցին համագումարի աշխատանքներին և միահամուռ կերպով հավանություն տվին նրա որոշումներին։ Համագումարին, բացի Հարավսլավիայի Կոմունիստների Միությունից, օբյեկտիվ պատճառներով չկարողացան ներկա լինել 12 կապիտալիստական երկրների կոմունիստական պարտիաներ, որոնք ուղարկեցին ողջույնի ջերմ հեռագրեր։

Համագումարում «ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին» կարդացած զեկուցման մեջ Ն. Ս. Խրուշչովը մեծ տեղ հատկացրեց միջազգային բանվորական շարժման հարցերին։

Խոսելով կոմունիստական շարժման մեծ հաջողությունների մասին Ն. Ս. Խրուշչովն ասաց. «Ներկայումս կոմունիստական ու բանվորական պարտիաներ կան 83 երկրներում, նրանք իրենց շարքերում միավորում են ավելի քան 33 միլիոն մարդ։ Դա մարքսիզմ-լենինիզմի վիթխարի հաղթանակն է, բանվոր դասակարգի մեծ նվաճումը»[1]։

Եվ իրոք աշխարհի բոլոր կոմունիստական և բանվորական պարտիաները ՍՄԿՊ XXI արտահերթ համագումար եկան ավելի ամրապնդված և համախմբված։

Թե ինչպիսի աճ են ունեցել կոմունիստական պարտիաները, ցույց է տալիս հետևյալ աղյուսակը.

Տարիներ	Կոմունիստական պարտիաների թիվը	Կոմունիստների ընդհանուր թիվը
1920	27	1.2 միլիոն
1939	43	4.2 միլիոն
1960	86	36 միլիոնից ավելի

Այժմ կապիտալիստական երկրներում գործում են 70 կոմունիստական և բանվորական պարտիաներ, որոնցից 22-ը Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում, 27-ը՝ Ասիայի, Աֆրիկայի և Ավստրալիայի երկրներում, 21-ը՝ Լատինական Ամերիկայի երկրներում։

[1] Ն. Ս. Խրուշչով, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, Երևան, 1959, էջ 116։

Մի շարք երկրներում կոմունիստական պարտիաները հանդիսանում են ամենամասսայական կազմակերպությունները և ընտրությունների ժամանակ ստանում են ձայների մեծամասնությունը։

Արևմտյան Եվրոպայում վերջին 20 տարում կոմունիստների թիվը 388 հազարից հասել է մոտ 2400 հազարի։

Իտալիայի Կոմունիստական պարտիան, չնայած հալածանքներին և հետապնդումներին, մեծ հաջողություններ ձեռք բերեց 1958 թ. տեղի ունեցած պառլամենտական ընտրությունների ժամանակ, ստանալով բոլոր ձայների մեկ հինգերորդ մասը։ Իտալական կոմունիստները դեպուտատների պալատում ունեն 140 տեղ, իսկ սենատում՝ 60։ Մինչև եթե 1943 թ. պարտիան ուներ 15 հազար անդամ, ապա այժմ նա իր շարքերում միավորում է մոտ 2 միլիոն կոմունիստ։

Իտալիայում կոմունիստների օգտին քվեարկում են 6,5 միլիոնից ավելի մարդ, Ֆրանսիայում՝ 5 միլիոնից ավելի, Ֆինլանդիայում 430 հազարից ավելի ընտրողներ։

Ֆրանսիական Կոմունիստական պարտիան ազատվելով ռևիզիոնիստական, անկայուն տարրերից այժմ նորից սկսել է արագ կերպով խտացնել իր շարքերը։ Նա այժմ իր շարքերում միավորում է մոտ 500 հազար անդամ։

Ամրապնդվում և իր շարքերն է համախմբում Մեծ Բրիտանիայի Կոմունիստական պարտիան։ Այդ պարտիայի վերջերս տեղի ունեցած XXVI համագումարը ցույց տվեց, որ կոմունիստական շարժման նոր էտապ մտնելու հետ կապված դժվարությունները հաղթահարված են և կոմունիստական պարտիան միասնական ու ամրակուռ ձևով է բերում նորանոր հաջողություններ։ Եթե 1958 թ. փետրվարին Մեծ Բրիտանիայի կոմպարտիան իր շարքերում ուներ 24900 անդամ, ապա այժմ այդ թիվը հասել է 26733 հոգու։

Շվեդիայում 1939 թ. կոմունիստական պարտիան ուներ 9 հազար անդամ, իսկ այժմ՝ 24 հազար։

Ավստրիայի կոմունիստների թիվը նախապատերազմյան շրջանի համեմատությամբ աճել է 3 անգամ։

Եվրոպայի մյուս երկրներում ևս կոմունիստական պարտիաները աճել են միջին հաշվով 1,5 անդամ։

Ասիական երկրներում կոմունիստների թիվը հասնում է 1900 հազարի։ Իրենց աճով աչքի են ընկնում Հնդկաստանի, Ինդոնեզիայի և Ճապոնիայի կոմպարտիաները։

Հնդկաստանում պատերազմից առաջ կոմպարտիան ուներ 5 հազար անդամ, իսկ այժմ՝ 300 հազար։ 1957 թ. ընտրություններին պառլամենտական և տեղական ընտրություններում կոմպարտիան ստացավ 12 միլիոն ձայն, նախորդ ընտրությունների համեմատությամբ 2 անդամ ավելի։

Հատկապես մեծ հաջողությունների հասան Քերալա նահանգի (բնակչությունը 13,6 միլիոն) կոմունիստները, որոնք գլխավորեցին նորաստեղծ կառավարությունը։ Նահանգի կոմունիստական կառավարությունը հալածանքների և պրովոկացիայի պայմաններում, Հնդկական կոնստիտուցիայի շրջանակներում, մի շարք միջոցառումներ իրագործեց, զգալի վերափոխություններ կատարեց, որոնք տվեցին իրենց դրական արդյունքները։ Սակայն ռեակցիոն ուժերը ստեղծեցին միասնական ճակատ, խոչընդոտեցին կառավարության առաջադիմական գործունեությունը և կոմունիստներին հեռացրին կառավարությունից։

Մեծ հաջողությունների է հասել Ինդոնեզիայի կոմպարտիան, որը միշտ եղել է երկրի անկախության և ազատության համար մղված պայքարի առաջամարտիկը։ 1957—1958 թթ. տեղական օրգանների ընտրության ժամանակ կոմպարտիան ստացավ մոտ 12 միլիոն ձայն, այսինքն երկու անգամ ավելի, քան նա ստացել էր 1955 թ. պառլամենտական ընտրությունների ժամանակ։

Ինդոնեզիայի կոմպարտիան 1952 թ. իր շարքերում ուներ 7910, իսկ տարվա վերջին արդեն 126,671 անդամ։ 1954 թ. մարտին պարտիականների թիվը հասավ 165,206, իսկ 1959 թ. սկզբներին՝ 1,5 միլիոնի։

Վերջին տարիներս կոմունիստական շարժումը արագ թափով զարգանում է Լատինական Ամերիկայի երկրներում, հատկապես Արգենտինայում, Բրազիլիայում, Ուրուգվայում,

Չիլիում և Կոլումբիայում։ Այդ երեկրների կոմպարտիաները ակտիվ կերպով մասնակցում են ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժմանը, վայելելով աշխատավորական մասսաների սերն ու համակրանքը։

Թեև Լատինական Ամերիկայի երկրներում կոմպարտիաները գործում են ծանր պայմաններում, որոշ երկրներում՝ ընդհատակում, նրանք հաղթահարում են մոլեգնող ռեակցիայի ճնշումը, հերոսական աշխատանք են տանում, իրենց շուրջը համախմբելով աշխատավորական մասսաներին։

Արգենտինայի Մենդոս նահանգում 1959 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցած ընտրություններում կառավարական պարտիայի ստացած ձայների քանակը իջավ 70%, իսկ կոմունիստական պարտիայի ստացած ձայների քանակն ավելացավ 120%։ Կառավարությունը դիմեց արտակարգ միջոցների և ապրիլի 27-ին հատուկ օրենքով արգելեց կոմունիստական պարտիան և այլ առաջադիմական հասարակական կազմակերպություններ։

Լատինական Ամերիկայի 21 կոմպարտիաներ իրենց շարքերում համախմբում են 360 հազարից ավելի կոմունիստներ։

Կոմունիստական շարժումը աճում է նաև Աֆրիկայում, որտեղ 1939 թ. 3000 կոմունիստների փոխարեն այժմ գործում են 50 հազար։

Խոսելով կոմունիստական շարժման հաջողությունների մասին, չպետք է մոռանալ, որ կապիտալիստական երկրներում գործող կոմունիստական և բանվորական 71 պարտիաներից 33-ը գտնվում են ընդհատակում։

Աներևակայելի ծանր պայմաններում են գործում Իսպանիայի և Պորտուգալիայի կոմունիստական պարտիաները, որոնք չնայած ֆաշիզմի սանձարձակ կամայականություններին քիչ հաջողությունների չեն հասել իրենց ամենօրյա քրտնաջան աշխատանքում։

Դժվարին պայմաններում են գործում նաև Պակիստանի, Բիրմայի, Իրանի, Եգիպտոսի, Մալայայի, Թուրքիայի և մի

շարք այլ երկրների կոմունիստական պարտիաները, որոնք գտնվում են ընդհատակում։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ միջազգային կոմունիստական և բանվորական շարժումն իր զարգացման նոր էտապում ոչ թե կանգնեց հղնաժամի առաջ և թուլացավ ու պառակտվեց, ինչպես ագաղակում էին բուրժուազիայի ապologետները, այլ, ընդհակառակը, էլ ավելի համախմբվեց և ամրապնդվեց իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում։

ՍՄԿՊ արտահերթ XXI համագումարը խոշոր նշանակություն ունեցավ կոմունիստական շարժման զարգացման վրա։

Համագումարի համաշխարհային-պատմական նշանակությունը կայանում է նրանում, որ նա հանրագումարի բերելով մեր երկրի տնտեսական ու հասարակական բոլոր բնագավառներում ձեռք բերված վիթխարի վերափոխությունները, ցույց տվեց, որ ՍՍՌՄ-ը մտնում է իր զարգացման նոր էտապը՝ կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը։ Համագումարը հանրագումարի բերեց սովետական ժողովրդի խոշորագույն նվաճումները, ընդունեց կոմունիստական շինարարության յոթնամյա պլանը, որի կատարումը կհանդիսանա սոցիալիզմի սիստեմի նոր, ակնառու հաղթանակը։ «Առաջիկա յոթնամյակի արմատական պրոբլեմը կապիտալիզմի հետ սոցիալիզմի տնտեսական խաղաղ մրցության մեջ առավելագույն ժամանակ շահելու պրոբլեմն է»[1],— ասաց Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXI համագումարում կարդացած իր զեկուցման մեջ։

ՍՄԿՊ XXI համագումարը մշակեց նաև մի շարք տեսական հարցեր, որոնք զգալի ներդրում են մարքսիզմ-լենինիզմի գանձարանում և լուսավորվում են դեպի կոմունիզմ տանող հաղթական ուղին։

Համագումարը, կոմունիստական հասարակության ծավալուն կառուցման ժամանակաշրջանը թևակոխելու կապակցությամբ հատուկ ուշադրություն դարձրեց կոմունիստական հասարակության երկու փուլերի, սոցիալիզմը կոմունիզմի

[1] Ն. Ս. Խրուշչով, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, էջ 19։

վերաճելու օրինաչափությունների, սոցիալիզմի լրիվ և վերջնական հաղթանակի, սոցիալիստական սեփականության կոլտնտեսային և համաժողովրդական ձևերի զարգացման ու մերձեցման, կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում հասարակության քաղաքական կազմակերպման, պետական կառուցվածքի ու կառավարման, համաշխարհային սոցիալիստական սիստեմի երկրների զարգացման ընդհանուր օրինաչափությունների և այլ հարցերի վրա։

Այժմ, երբ սոցիալիզմը դուրս է եկել մեկ երկրի սահմաններից և վերածվել համաշխարհային սիստեմի, այլևս չի կարելի աշխարհին նախկին ակնոցներով նայել։ Ուժերի հարաբերությունը փոխվել է։ Եթե ՍՄԿՊ XX համագումարը նշեց, որ պատերազմի ճակատագրական անխուսափելիություն գոյություն չունի, ապա XXI համագումարը հայտարարեց, որ ՍՍՌՄ, Եվրոպայի և Ասիայի սոցիալիստական բոլոր երկրների տնտեսական պլանների իրագործման հետևանքով կստեղծվեն ռեալ հնարավորություններ պատերազմը, որպես միջազգային հարցերի լուծման միջոց, իսպառ վերացնելու համար։

Սոցիալիզմի հզոր լագերը կհարկադրի իմպերիալիստական պետություններին հրաժարվելու իրենց ռազմական պլաններից։

Համագումարում Ն. Ս. Խրուշչովը հատուկ ուշադրություն դարձրեց խաղաղության համար մղվող պայքարին, որը հանդիսանում է ՍՍՌՄ և սոցիալիստական բոլոր երկրների արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրը։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը հանդիսանում է խաղաղության համար մղվող պայքարի դրոշակակիրը։ Այդ երկրների զենքավանները ջանք չեն խնայում պատերազմը որպես հասարակական երևույթ մարդկության կյանքից ընդմիշտ վերացնելու համար։

Ն. Ս. Խրուշչովի այցելությունը ԱՄՆ, Ֆրանսիա և այլ երկրներ, ՍՍՌՄ Գերագույն Սովետի չորրորդ սեսիայի որոշումը սովետական զինված ուժերի թիվը 1200 հազարով կրճատելու մասին, վառ արտահայտություններ են այն բանի, թե ինչ-

պիսի հետևողականությամբ Սովետական Միության Կոմունիստական պարտիան խաղաղության և ժողովուրդների անվտանգության քաղաքականություն է վարում։

Տնտեսության զարգացման ուղղությամբ ՍՍՌՄ և սոցիալիստական մյուս երկրների համաշխարհային պատմական հաղթանակները վճռական ազդեցություն են ունենում միջազգային կոմունիստական շարժման զարգացման վրա, բարենպաստ պայմաններ ստեղծում նրա հաղթական առաջընթացի համար։

Այսպիսով, եթե ՍՄԿՊ XX համագումարն իր պատմական որոշումներով հանդիսացավ միջազգային կոմունիստական շարժման նոր էտապի սկիզբը, որը ուղեկցվեց իմպերիալիստական պրոպագանդայի և ռևիզիոնիստական տարրերի աշխուժացմամբ, կոմունիստական պարտիաների շարքերում գտնվող որոշ մանրբուրժուական տարրերի տատանումներով, սուր դիսկուսիաներով, կոմունիզմի թշնամիների դեմ մղվող պայքարի նոր ձևերի և մեթոդների մշակմամբ, հնացած ու շաբլոնացած դոգմաներից հրաժարումով, ապա ՍՄԿՊ XXI արտահերթ համագումարը հանդիսացավ վառ ապացույցն այն բանի, որ հիմնական դժվարությունները հաղթահարված են և միջազգային կոմունիստական շարժումը այժմ միասնական է ու համախմբված, քան երբեք։

Ելնելով միջազգային իրադրության խոր վերլուծությունից, ՍՄԿՊ արտահերթ XXI համագումարում Ն. Ս. Խրուշչովը կոմունիստական պարտիաների ուշադրությունը հրավիրեց ֆաշիզմի վերածնման սպառնալիքի վրա, նշելով, որ այն ժամանակակից պայմաններում կարող է հանդես գալ այլ, նոր ձևերով, և ոչ թե ժողովուրդների աչքում վարկաբեկված նախկին ձևով։ Ընկ. Խրուշչովի զեկուցման մեջ ցույց տրվեց, որ այժմ լայն հնարավորություններ են ստեղծվել ռեակցիայի և ֆաշիզմի դեմ վճռական պայքար ծավալելու համար։ Այդ գործում հաջողության գրավականը դեմոկրատական ուժերի, և առաջին հերթին բանվոր դասակարգի միասնությունն է, կոմունիստական և բանվորական պարտիաների շարքերի գաղափարական և կազմակերպական ամրապնդումը, հետագա

համախմբումը մարքսիզմ-լենինիզմի հիման վրա, նրանց ինտերնացիոնալ կապերի հետագա զարգացումը։

Խոսելով 1957 թ. Նոյեմբերյան խորհրդակցությունների մասին, Ն. Ս. Խրուշչովը ասաց. «Կոմունիստական և բանվորական պարտիաների Նոյեմբերյան խորհրդակցությունները ցուցադրեցին եղբայրական պարտիաների հայացքների լիակատար միասնությունը... դեկլարացիայի եղրակացությունների ճշտությունը լիովին հաստատեց կյանքը։ Եվ մենք դրանով առաջնորդվում ենք այժմ։

Նոյեմբերյան խորհրդակցություններից հետո տեղի ունեցավ յուրաքանչյուր կոմունիստական պարտիայի ներսում ուժերի հետագա կոնսոլիդացիա, էլ ավելի համախմբվեց միջազգային կոմունիստական շարժումը»[1]։

ՍՄԿՊ XXI համագումարը առանձնապես մեծ ուշադրություն դարձրեց եղբայրական պարտիաների հարաբերությունների հարցին, նշելով, որ դրանք պետք է խարսխված լինեն միջազգային բանվորական շարժման ազգային ջոկատների իրավահավասարության և անկախության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների հիմքի վրա։ Բոլոր կոմունիստական և բանվորական պարտիաները անկախ են իրենց քաղաքականությունը մշակելիս և ելնում են տվյալ երկրի կոնկրետ պայմաններից։

«Մեր շարքերի համախմբվածության և ամրության նրկատմամբ հոգատարությունը յուրաքանչյուր կոմունիստական ու բանվորական պարտիայի ինտերնացիոնալ բարձրագույն պարտքն է։ Բանվոր դասակարգի ազգային գործի հաջողությունը անհերևակայելի է առանց նրա բոլոր ջոկատների ինտերնացիոնալ համերաշխության»[2]— ասաց Ն. Ս. Խրուշչովը համագումարի պատգամավորների և հյուրերի բուռն ծափահարությունների ներքո։

---

[1] Ն. Ս. Խրուշչով. ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, էջ 120։

[2] Նույն տեղում, էջ 129։

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆ Է

Ժամանակակից պայմաններում, երբ ամբողջ աշխարհի պրոգրեսիվ մարդկությունը համառ պայքար է մղում պատերազմի վտանգի, սպառազինման մրցավազքի և ատոմային զենքի փորձարկումների դեմ, երբ ահարկու պատերազմի սև ուրվականը ամեն օր զգացնել է տալիս իրեն, «բացառիկ նշանակություն է ստանում բանվոր դասակարգի, նրա արհեստակցական միությունների միասնության պրոբլեմը, նրա քաղաքական պարտիաների՝ կոմունիստների, սոցիալիստների և բանվորական մյուս պարտիաների գործողությունների միասնությունը։

Արդի աշխարհի ոչ քիչ դժվարությունների արմատն այն է, որ շատ երկրներում բանվոր դասակարգը երկար տարիներ մընում է պառակտված և նրա տարբեր ջոկատները հանդես չեն գալիս միասնական ճակատով, որ ձեռնտու է միայն ռեակցիայի ուժերին։ Մինչդեռ այժմ մեր կարծիքով դրությունը փոխելու հեռանկար է բացվում։ Կյանքը օրակարգի մեջ է մտցրել բազմաթիվ այնպիսի հարցեր, որոնք ոչ միայն պահանջում են բանվորական պարտիաների մերձեցում, համագործակցություն, այլև իրական հնարավորություններ են ստեղծում այդ համագործակցության համար»,[1] — ասաց

[1] Ն. Ս. Խրուշչով, Սովետական Միության կոմունիստական պարտիայի կենտկոմի հաշվետու զեկուցումը XX համագումարին, էջ 25—26։

Ն. Խրուշչովը ՍՄԿՊ XX համագումարում կարդացած հաշվետու զեկուցման մեջ։

Ներկա իրադրությունից դուրս գալու ծանր խնդիրը, դրվում է բանվորական շարժման բոլոր գործիչների վրա, անկախ պարտիականությունից և իդեոլոգիայից։ Բանվորական շարժումը գտնվում է իր զարգացման այնպիսի շրջանում, երբ պրոլետարիատի քաղաքական պարտիաները իրավունք չունեն այլևս առաջին պլանի վրա քաշել այն հարցերը, որոնց նկատմամբ համաձայնություն չի կարող կայացվել, ընդհակառակը, պետք է գտնել շոշափման կետեր և այդ բազայի վրա մշակել համագործակցության հիմքեր։

Խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում պետք է ստեղծել դեմոկրատական ժողովրդական ճակատ։ Միասնական դեմոկրատական ճակատի ղեկավար ուժը պետք է հանդիսանա բանվոր դասակարգը, որը իր հետևից կտանի գյուղացիությանը և բոլոր դեմոկրատական ուժերին։

Սակայն, մինչև այսօր էլ պառակտված են պրոլետարիատի ոչ միայն քաղաքական պարտիաները, այլև արհմիությունները։ Կապիտալիստական երկրներում գոյություն ունեն պրոգրեսիվ և ռեֆորմիստական արհմիություններ։

1945 թ. հոկտեմբերին ստեղծվեց Արհմիությունների համաշխարհային Ֆեդերացիան, որի մեջ մտան բոլոր երկրների արհմիութենական կազմակերպությունները։ ԱՄՆ-ի և Անգլիայի արհմիությունների տրեդյունիոնիստական ղեկավարությունը չկարողանալով իր հետևից տանել այս նորաստեղծ կազմակերպությունը, 1949 թ. հեռացավ նրանից, ստեղծելով «Ազատ» արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան։

Ամբողջ աշխարհի արհմիությունները ունեն 170 միլ. անդամ, որից 95 միլ. մտնում են Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի մեջ։

Արհմիութենական երրորդ կենտրոնը հանդիսանում է Քրիստոնեական Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան, որը միավորում է մոտ 5 միլ. մարդ։

Բացի վերոհիշյալ արհմիութենական միջազգային կենտրոններից, գոյություն ունեն նաև մի շարք ավտոնոմ արհ-

միությունները 10—15 միլ. անդամներով, որոնք չեն մտնում ոչ մի միջազգային արհմիութենական կազմակերպության մեջ։

Այսպիսի դրությունը, բնականաբար, խիստ կերպով դժվարացնում է այն առաջնահերթ խնդիրների լուծումը, որոնք այսօր կանգնած են պրոլետարիատի առաջ։

Միջազգային կոմունիստական շարժման շահերը պահանջում են միասնական ճակատ ստեղծել բոլոր երկրներում, վերջապես բանվոր դասակարգի շարքերում գոյություն ունեցող պառակտմանը և համախմբել բոլոր ուժերը։ Դա, իհարկե, առաջին հերթին վերաբերում է կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական պարտիաների համագործակցությանը և միասնական գործողությունների հաստատմանը։

Իսկ հնարավո՞ր է արդյոք պրոլետարիատի գործողությունների միասնություն հաստատել ոչ միայն ազգային, այլև միջազգային մասշտաբով։

Միջազգային կոմունիստական և բանվորական շարժման ակնառավոր գործիչ Գ. Դիմիտրովը Կոմունիստական Ինտերնացիոնալի VII կոնգրեսում խոսելով ֆաշիզմի դեմ պայքարելու և ժողովրդական ճակատի ստեղծման խնդիրների մասին, ասել է. «Պրոլետարիատի միասնական գործողությունը ազգային և միջազգային մասշտաբով՝ ահա այն հզոր զենքը, որ բանվոր դասակարգին ընդունակ է դարձնում ոչ միայն հաջող պաշտպանության, այլև հաջող հակահարձակման ընդդեմ ֆաշիզմի, ընդդեմ դասակարգային թշնամու»[1]։ Երրորդ Ինտերնացիոնալի VII կոնգրեսը համոզիչ կերպով ցույց տվեց, որ բանվոր դասակարգի գործունեության միասնությունը լիովին հնարավոր է։

Միջազգային իրադրության ժամանակակից էտապի խոր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բանվոր դասակարգի գործունեության միասնությունը այժմ ևս ոչ միայն անհրաժեշտ է, այլև լիովին հնարավոր։

Որպես կոմունիստական և սոցիալիստական պարտիա-

---

[1] Г. Димитров, Доклад на VII всемирном конгрессе Коммунистического Интернационала, Политический отчет ЦК БРП(к) V съезду партии. Госполитиздат, 1958, стр. 24.

ների միասնական գործունեության հիմնական խնդիրներ առաջ են քաշվում պայքարը պատերազմի վտանգի, սպառազինման մրցավազքի, ատոմային զենքի փորձարկումների, ֆաշիզմի կամ ռազմական դիկտատուրայի ծագման վտանգի դեմ, հանուն դեմոկրատիայի, պրոգրեսի, բանվոր դասակարգի նյութական բարեկեցիկ պայմանների։

Մի՞թե այս խնդիրները չեն, որ հուզում են աշխատավոր մարդկությանը, հանդիսանալով նրանց ամենօրյա մտածմունքի առարկան։ Մի՞թե այս խնդիրների լուծման հարցում որևէ բանվոր կարող է երկու կարծիք ունենալ։ Իհարկե ոչ։

Կամ կարող է գտնվել, իրեն պրոլետարական համարող մի պարտիա, որը այս հարցերում այլ դիրք ունենա։ Բնական է, որ ոչ։

Կյանքը հրամայողաբար առաջ է քաշում կոմունիստական և սոցիալիստական պարտիաների միջև միասնականություն և փոխգործունեություն հաստատելու պահանջը, դեմոկրատական ճակատ ստեղծելու պահանջը։

Պատմական փորձը ցույց է տալիս, որ եթե բանվոր դասակարգի պատակտումը չլիներ, ապա ֆաշիզմի հաղթանակը, երկու համաշխարհային պատերազմները, Ֆրանսիայի 1958 թ. երկրորդ կեսի դեպքերը տեղի չէին ունենա։

Բանվոր դասակարգի միասնությունը դեմոկրատական ուժերի հաղթանակի գրավականն է։ 1934—1936 թթ. Ֆրանսիայում ժողովրդական ճակատի ստեղծումը արդիլակեց ֆաշիստական ուժերի կողմից իշխանության գրավումը։ Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում բանվոր դասակարգի և նրա պարտիաների համախմբումը հսկայական դեր կատարեց հին կարգերի տապալման և ժողովրդա-դեմոկրատական կարգերի հաստատման գործում։

Այն բոլոր երկրներում, որտեղ կոմունիստները և սոցիալիստները համագործակցում են, այնտեղ հաջողվում է զգալի նվաճումներ ձեռք բերել բանվոր դասակարգի ազատության համար մղված պայքարում։

Սոցիալիստական պարտիաներում, ժամանակակից էտապում, տեղի է ունենում մեծ խմորում, դժգոհություններ։

Ավելի և ավելի որոշակիորեն են ընդգծվում նրա երկու՝ ձախ և աջ թևերը։ Սոցիալիստական պարտիաների շատ անդամներ լրիվ գիտակցելով, թե ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ իմպերիալիզմի կողմից նախապատրաստվող պատերազմը, և այդ կապակցությամբ ինչպիսի ահռելի պատասխանատվություն է ընկնում պրոլետարիատի քաղաքական պարտիաների վրա, ավելի և ավելի հաճախակի են իրենց ձայնը բարձրացնում ի պաշտպանություն խաղաղության և բոլոր դեմոկրատական ուժերի համախմբման։

Չնայած վերջին տարիներին սոցիալիստական պարտիաների հեղինակության որոշ անկմանը, այնուամենայնիվ, նրանք այժմ էլ բանվորական շարժման մեջ զգալի ազդեցություն ունեն և պատերազմի վտանգի դեմ մղվող պայքարում կարող են լուրջ ծառայություններ մատուցել։

Ի՞նչ վիճակում է գտնվում սոցիալիստական, ռեֆորմիստական շարժումը։

Աշխարհի բոլոր սոցիալիստական պարտիաները համախմբված են Սոցիալիստական ինտերնացիոնալում, որը ստեղծվել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո 1951 թ.։ Եթե II Ինտերնացիոնալում գերակայությունը պատկանում էր գերմանական սոցիալ-դեմոկրատներին, II 1/2 ինտերնացիոնալում՝ Ավստրիական սոցիալ-դեմոկրատներին, ապա ժամանակակից Ինտերնացիոնալը, որը իրեն համարում է II ինտերնացիոնալի ժառանգորդը, գերակայվում է անգլիական լեյբորիստների աջ լիդերների կողմից։

Սոցիալիստական ինտերնացիոնալի մեջ մտնում են 36 պարտիաներ և կազմակերպություններ, որոնք ունեն 10,465 965 անդամ։ Ամբողջ աշխարհի սոցիալիստական պարտիաները ունեն 12 միլիոն անդամ։

Սոցիալիստական ինտերնացիոնալի մեջ մտնող 36 պարտիաներից 24-ը գործում են Եվրոպայում, 5-ը՝ Ասիայում, 6-ը՝ Ամերիկայում, 1-ը՝ Նոր Զելանդիայում։

Սոցիալ-դեմոկրատական և լեյբորիստական պարտիաները դեռևս կերակրիչ ազդեցություն ունեն Շվեդիայում, Դանիայում, Նորվեգիայում, Ավստրիայում, Անգլիայում, Բելգիա-

յում, Նոր Զելանդիայում, Իռլանդիայում, Գերմանական Ֆեդերատիվ ռեսպուբլիկայում, Լյուքսեմբուրգում և Շվեյցարիայում։

Ասիայի և Աֆրիկայի սոցիալիստական պարտիաները, բացի Սոցիալիստական Ինտերնացիոնալից, մտնում են իրենց ստեղծած Ասիայի Սոցիալիստական կոնֆերենցիա կազմակերպության մեջ։ Սոցիալիստական Ինտերնացիոնալի և այս նորաստեղծ կազմակերպության միջև գոյություն ունեն լուրջ հակասություններ։ Ասիայի Սոցիալիստական կոնֆերենցիայի ստեղծումը հենց Արևմուտքի և Արևելքի սոցիալ-դեմոկրատական պարտիաների միջև եղած այդ հակասությունների արդյունքն է։

Սոցիալ-դեմոկրատական պարտիաները մի շարք երկրներում ղեկավարում են կառավարությունները, կամ մասնակցում նրանց։ 1956—1957 թթ. սոցիալիստները ղեկավարել են 10, մասնակցել 5 կառավարությունների։

Բնական է, որ ղեկավարելով երկրի կառավարությունը, կամ մասնակցելով նրա գործունեությանը, սոցիալիստական պարտիաները կարող են անմիջական մասնակցություն ցույց տալ տվյալ պետության քաղաքականության մշակմանը, այն ծառայեցնելով խաղաղության նպատակներին։

Բայց անհրաժեշտ է նշել, որ սոցիալիստական պարտիաների և հետևաբար Սոցիալիստական Ինտերնացիոնալի իդեոլոգիան միասնական չէ։

Սոցիալիստական շարժման աջ թևի իդեոլոգիան փաստորեն ոչնչով չի տարբերվում բուրժուական իդեոլոգիայից և բուն էության ժխտում է մարքսիզմը։ Ինչ վերաբերում է ձախ թևին, ապա նա ձևականորեն դեռևս ընդունում է մարքսիզմը, իհարկե, առանց պրոլետարական ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին նրա դրույթների։

Բայց սոցիալիստական շարժման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սոցիալիստական պարտիաների և Ինտերնացիոնալի իդեոլոգիան չի կարելի նույնացնել այդ պարտիաների բաղմաթիվ շարքային անդամների ձգտումների հետ։ Եթե սոցիալիստական պարտիաների ղեկավարները փաստո-

րեն միայն խոսքերով են ընդունում սոցիալիզմը, ապա այդ պարտիաների բազմաթիվ շարքային անդամներ անկեղծ կերպով ընդունում են սոցիալիզմի տեսությունը, իրենց պայքարի նպատակը համարելով սոցիալիստական հասարակության կառուցումը։

Ահա այստեղից էլ հնարավորություն է ստացվում հանուն խաղաղության և դեմոկրատիայի մղվող պայքարում կոմունիստական և բանվորական պարտիաների միասնական գործունեության համար։

Կոմունիստական և սոցիալիստական պարտիաների համագործակցության հարցն այնքան է հասունացած և այնպիսի ճշտությամբ է արտահայտում պրոլետարիատի իղձերն ու տենչերը, որ ՍՄԿՊ XX համագումարի կողմից այդ հարցը բարձրացնելուց հետո, այն անմիջապես իր արձագանքը գտավ ամբողջ աշխարհի կոմունիստական և սոցիալիստական շարժման շարքերում։

Իսպանիայի Կոմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար Դոլորես Իբարուրին ելնելով ՍՄԿՊ XX համագումարի այն եզրակացությունից, որ սոցիալիզմի հզոր լագերը և միասնական միջազգային բանվորական շարժումը լիովին ի վիճակի են կանխելու պատերազմը, գրել է. «Եթե չհաշվենք տարբեր երկրներում սոցիալիստների մի քանի խմբերի հետ միասնության և փոխադարձ ըմբռնման գործում ձեռք բերած հաջողությունները, ապա մեր առաջ կանգնած է իր լուծումը պահանջող մի մեծ խնդիր։ Մի շարք երկրներում բանվորական պարտիաների միասնական գործողությունների բացակայությունը բացատրվում է սոցիալ-դեմոկրատական պարտիաների ղեկավարների խիստ հակակոմունիստական քաղաքականությամբ»[1]։

ՍՄԿՊ XX համագումարից հետո տեղի ունեցած բոլոր կոմունիստական պարտիաների համագումարներում, պլենումներում, կոնֆերանսներում, ղեկավար գործիչների հոդվածներում սոցիալիստների հետ միասնական ճակատ ստեղ-

---

[1] „Правда", 1956, № 73.

ծելու խնդիրը բարձրացվում է և պաշտպանվում, որպես կենտրոնական հարցերից մեկը։

Ֆրանսիայի կոմունիստական պարտիայի Կենտկոմի քարտուղար Ժակ Դյուկլոն «Բանվոր դասակարգի միասնության համար» վերնագրով հոդվածում գրել է. «Անկասկած է, որ Ֆրանսիայում և ուրիշ շատ երկրներում, եթե բանվոր դասակարգը միասնական լինի, եթե կոմունիստական և սոցիալիստական պարտիաները միավորեն իրենց ջանքերը, դրանով իսկ պայմաններ ստեղծելով ամբողջ բանվոր դասակարգի միասնական գործողությունների համար, բոլոր դեմոկրատական և ազգային ուժերի համախմբման համար, ապա նրանց հզորությունը կդառնա անհաղթահարելի»[1]։

Աշխարհի ամենամասսայական կոմպարտիաներից մեկի գլխավոր քարտուղար՝ Պ. Տոլյատին պարտիայի VIII համագումարում (1956 թ. դեկտեմբերի 8—14), ասել է. «Քաղաքական բնագավառում մենք ՍՄԿՊ XX համագումարից հետո ելնում ենք այն փաստի արձանագրումից, որ ստեղծվել են նոր պայմաններ, որոնք խթանում են և հնարավոր դարձնում նոր հաջողություններ բանվոր դասակարգի և սոցիալիստական սկզբունքները պաշտպանող բոլոր կազմակերպված ուժերի միասնականությանը հասնելու գործում։

Այդ պայմանները ուժի մեջ են մնում, չնայած սոցիալ-դեմոկրատական լիդերների այժմյան ռեակցիոն հարձակմանը, որը նպատակ ունի թաքցնել այդ պայմանները, լիկվիդացնել դրանք և դրանով իսկ հավերժացնել պառակտումը»։

Եվ իրավացիորեն հարց է ծագում, թե ինչո՞ւ տարբեր հասարակարգ ունեցող պետությունների ներկայացուցիչները, պառլամենտական դելեգացիաները պարբերաբար հանդիպումներ են ունենում, քննարկելով միջազգային զարգացման կարևորագույն հարցերը, իսկ պրոլետարիատի քաղաքական պարտիաների ներկայացուցիչները չեն հանդիպում, չեն քննարկում այն հարցերը, որոնք կենսական նշանակություն ունեն բանվոր դասակարգի համար։

---

[1] „Правда", 1956, № 90.

[2] „Коммунист", 1957, № 1, стр. 75.

ՍՄԿՊ XX համագումարը ջարդեց լռության սառույցը։

Կոմունիստական և բանվորական պարտիաների 1957 թ. Նոյեմբերյան խորհրդակցությունում ընդունված դեկլարացիայում ևս նշվեց տարբեր երկրներում ժողովրդական ճակատ ստեղծելու, տարբեր պարտիաների և կազմակերպությունների քաղաքական համագործակցության հնարավորությունը։ Դեկլարացիայում հատուկ ուշադրություն դարձվեց կոմունիստական և սոցիալիստական պարտիաների համագործակցության հարցին։

«Ինչպես աշխատավորների կենսապայմանների բարելավման, նրանց դեմոկրատական իրավունքների ընդլայնման ու պահպանման, ազգային անկախության նվաճման ու պաշտպանության, ժողովուրդների միջև խաղաղության համար մղվող պայքարում, այնպես էլ իշխանության նվաճման և սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում կոմունիստական պարտիաները հանդես են գալիս սոցիալիստական պարտիաների հետ համագործակցություն հաստատելու պահանջով»[1]— ասվում է Դեկլարացիայում։

Դեկլարացիայում միաժամանակ նշվում է այն փաստը, որ չնայած սոցիալիստական պարտիաների աջ լիդերների պառակտիչ գործունեությանը, տարբեր հարցերի շուրջը կոմունիստների և սոցիալիստների միջև համագործակցություն հաստատելու հնարավորությունը օրավուր մեծանում է։ Ինչ վերաբերում է իդեոլոգիական տարաձայնություններին, ապա այդ պարտիաների ղեկավար գործիչները ելնելով ներկա դրության վերլուծությունից պետք է լավ հասկանան, որ դրանք չպետք է արգելք հանդիսանան համագործակցության հաստատման համար։

ՍՄԿՊ 1957 թ. Դեկտեմբերյան պլենումը քննարկելով Նոյեմբերյան խորհրդակցությունների արդյունքները, ամբողջապես հավանություն տվեց տարբեր դեմոկրատական պարտիաների և կազմակերպությունների հետ կոմունիստական պարտիաների համագործակցություն հաստատելու ցանկությանը։

---

[1] „Декларация. Манифест мира", стр. 75.

Աշխարհի բոլոր կոմունիստական և բանվորական պարտիաները, ելնելով միջազգային զարգացման ներկա դրությունից, լայն աշխատանք են ծավալել բոլոր դեմոկրատական պարտիաների և կազմակերպությունների և առաջին հերթին սոցիալիստական պարտիաների հետ համագործակցություն հաստատելու համար։

ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեն XX համագումարից հետո նամակներով դիմեց Ֆրանսիայի սոցիալիստական պարտիային, Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական պարտիային, Անգլիայի լեյբորիստական պարտիային, Նորվեգիայի բանվորական պարտիային, Դանիայի սոցիալ-դեմոկրատական պարտիային, Բելգիայի, Ավստրիայի և Նիդերլանդիայի աշխատավորական պարտիաներին, բանվոր դասակարգի շահերի և իրավունքների պաշտպանության ու խաղաղության համար մղվող պայքարում համագործակցելու առաջարկով։

Սոցիալիստների հետ կապեր հաստատելու կոնկրետ առաջարկներով բազմիցս հանդես են եկել նաև Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի, Ճապոնիայի և շատ ուրիշ երկրների կոմունիստական պարտիաների Կենտրոնական Կոմիտեները։

ՍՄԿՊ XX համագումարից հետո սոցիալիստական պարտիաների առանձին ղեկավարներ հանդես եկան սոցիալիստական երկրների և կոմունիստական պարտիաների հետ մերձենալու առաջարկներով։ Այդպիսի մի շարք ելույթներ ունեցել է Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական պարտիայի նախագահ Օլենհաուերը, որը վերջին անգամ 1959 թ. ապրիլին խոսելով այդ մասին, ասել է. «Չնայած նրան, որ ԳՍԴՊ էական հարցերում խոր սկզբունքային հակասություններ ունի կոմունիզմի հետ, նա այնուամենայնիվ ազնիվ կերպով պատրաստ է բարեկամական կապեր հաստատելու Արևելքի և բոլոր հարևանների հետ...»[1]։

Ատոմային զենքի փորձարկման և պատերազմի վտանգի դեմ հանդես են գալիս Անգլիայի լեյբորիստական պարտիան,

---

[1] „Правда". 1959, № 117.

Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական պարտիան, Ճապոնիայի և այլ երկրների սոցիալիստները։

Սոցիալիստական պարտիաներից շատերը հանդես են գալիս իմպերիալիստական պետությունների գաղութակալական քաղաքականության դեմ, գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի պաշտպանությամբ։ Որոշ սոցիալիստական պարտիաներ իրենց գործունեությամբ փոքր դեր չեն կատարում սոցիալական պրոգրեսի, դեմոկրատական ազատությունների, ազգային անկախության և խաղաղության համար մղվող պայքարում։

Ահա այս հարցերի շուրջն է, որ կարող են համագործակցել կոմունիստական և սոցիալիստական պարտիաները։

Սակայն պետք է նշել, որ մի շարք հարցերում կոմունիստների և սոցիալիստների հայացքների մոտավոր համընկնումը դեռևս երաշխիք չէ այն բանի, որ կստեղծվի համագործակցություն։ Կարծիքների համընկնումը ոչ միշտ է տանում դեպի համագործակցության հաստատումը։

Շատ հաճախ սոցիալիստական պարտիաների ղեկավարները դերադասում են համագործակցել բուրժուական, քան կոմունիստական պարտիաների հետ, այնպիսի դիրք են բռնում, որ միայն վնասում է բանվոր դասակարգի պայքարին ու ազատագրության գործին։

Դրա վառ ապացույցը հանդիսացան 1958 թ. Ֆրանսիայում տեղի ունեցած դեպքերը, երբ դը Գոլլի իշխանության գրավման կապակցությամբ Դի Մոլլեն խայտառակ կերպով դավաճանեց բանվոր դասակարգի շահերին։ Անկասկած է, որ եթե սոցիալիստները համագործակցեին կոմունիստների հետ, դը Գոլլին չէր հաջողվի գրավել իշխանությունը։

Բանվոր դասակարգի շահերի դավաճանելը այնքան ակներև էր, որ լեյբորիստների օրգան «Տրիբյուն» թերթը գրում էր. «Գեներալ դը Գոլլը իր հաղթությամբ զգալի կերպով պարտական է ֆրանսիական սոցիալիստների դավաճանությանը, Դի Մոլլեի դավաճանությանը»։ Նույն կարծիքն է արտահայտել նաև Իտալիայի սոցիալիստական պարտիայի կենտկոմի անդամ սենատոր Լուսուն, հայտարարելով. «Ֆրանսիայի

ներկա կատաստրոֆիկ սիտուացիան՝ դը Գոլլի իշխանության գլուխ գալը, դա հակակոմունիզմի ծնունդն է։ Դրա պատասխանատվությունը ընկնում է սոցիալ-դեմոկրատների վրա։ Մնալով դավաճանների և խաբեբաների մի ոչ այնքան մեծ խմբի հետ, Գի Մոլլեն այնպիսի վերջ կունենա, որպիսին ունեցավ Մակդոնալդը։ Միայն ժողովրդական ճակատը կարող է փրկել Ֆրանսիան»[1]։

Դնելով սոցիալիստական պարտիաների հետ համագործակցելու հարցը, կոմունիստական պարտիաները այն կարծիքին չեն, որ պետք է դադարեցնել ամեն մի իդեոլոգիական պայքար։ Ընդհակառակը, նրանք գտնում են, որ անհրաժեշտ է համագործակցելով հանդերձ, քննադատել այդ պարտիաների քաղաքական կուրսը, դեռևս նրանց ազդեցության տակ գտնվող աշխատավոր զանգվածներին ցույց տալ ազատագրության ճիշտ ուղին։

Ինչպես հայտնի է ձախ սոցիալիստների հետ համագործակցելու գործում մեծ փորձ ունի Իտալական կոմունիստական պարտիան։

Իտալիայի կոմունիստական և սոցիալիստական պարտիաները երկրի ամենախոշոր քաղաքական ուժն են։ 1958 թ. տեղի ունեցած ընտրությունների ժամանակ Իտալիայի սոցիալիստական պարտիան, որ ղեկավարում է Պ. Սեննին, ստացավ 4,200 հազար ձայն, իսկ կոմունիստները Պ. Տոլյատտիի ղեկավարությամբ 6,700 հազար ձայն։ Սարդինիայի աջ սոցիալ-դեմոկրատական ռեֆորմիստական պարտիան, ընդհակառակը, 1948 թ. ստացած 1,8 միլիոն ձայնի փոխարեն 1958 թ. ստացավ 1,3 միլիոն ձայն։

Սոցիալիստների հետ համագործակցությունն իր կոնկրետ դրական արդյունքներն է տալիս նաև Ճապոնիայում։ Ահա այդ է նկատի ունեցել Ճապոնիայի կոմպարտիայի նախագահ Սանձո Նոսական, ասելով. «Կոմունիստական և սոցիալիստական պարտիաների կարծիքների տարբերությունը սոցիալիստական ռևոլյուցիայի էական հարցերի շուրջը

---

[1] „Коммунист", 1958, № 15, стр. 28—29.

չեն կարող արգելք հանդիսանալ նրանց համագործակցությանը՝ ժողովրդական մասսաների առաջնահերթ պահանջների համար մղվող պայքարում»[1]։ Ճապոնիայի համարյա բոլոր շրջաններում դեմոկրատական ուժերը գործում են միասին։ Շնորհիվ դրա 40 քաղաքների մունիցիպալ խորհուրդներ իրենց շրջանները հայտարարել են «ատոմազերծ գոտիներ», որտեղ նրանք հասել են ատոմային զենքի բազաների շինարարության արգելման։

Ճապոնա-ամերիկյան «անվտանգության պայմանագրի» վերանայման կապակցությամբ, որի նպատակն է Ճապոնիան ավելի ամուր կապել ամերիկյան իմպերիալիզմի ռազմակառքին և ընդլայնել ստիկանության իրավունքները», արհմիությունների գլխավոր խորհուրդը որոշեց ամբողջ երկրում կազմակերպել ժողովրդական ցույցեր, միտինգներ և գործադուլներ։ Թեև արհմիությունների գլխավոր խորհրդում գլխավոր դերը պատկանում է Ճապոնիայի սոցիալիստական պարտիային, կոմունիստական պարտիան լիովին պաշտպանեց այդ որոշումը և սոցիալիստների հետ համագործակցած ակտիվ գործունեություն ծավալեց այն կյանքում իրականացնելու համար։

Գործադուլներին և բողոքի միտինգներին մասնակցեցին 4,5 միլիոն մարդ։ 386 հասարակական կազմակերպություններ, որոնք իրենց շարքերում ունեն 10 միլիոնից ավելի անդամներ, դիմեցին կառավարությանը բողոքի դիմումներով։

Ճապոնիայի սոցիալիստական պարտիայի գլխավոր քարտուղար Ասանուման հանդիպում ունեցավ կոմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար Միյամոտոյի հետ։ Ասանուման հավաստիացրեց, որ սոցիալիստական պարտիան հանդես է գալիս հանուն երկրի չեզոքության քաղաքականության, կոլեկտիվ անվտանգության պայմանագրի կնքման (Ճապոնիայի, Չինաստանի, ԱՄՆ-ի և ՍՍՌՄ-ի մասնակցությամբ), Ասիայի և Խաղաղ օվկիանոսի շրջանում «ատոմազերծ խաղաղ գոտի» ստեղծելու օգտին։ Նա համաձայնվեց

[1] „Проблемы мира и социализма", 1958, № 2, стр. 41.

Միյամոտոյի այն մտքի հետ, որ սոցիալիստների և կոմունիստների միջև առանձին հարցերի շուրջը կարելի է հասնել համագործակցության։

Պառլամենտի դեպուտատ սոցիալիստ Մացումոտոն ճապոնական կոմպարտիայի Կենտկոմի «Ջենեյ» ամսագրի խմբագրությունում ունեցած մի զրույցի ժամանակ ասել է. «Սոցիալիստական պարտիայի վերաբերմունքը համագործակցության նկատմամբ զգալիորեն փոխվել է։ Առաջ տեղերում շատ խիստ կերպով անց էր կացվում սահմանազատման քաղաքականություն կոմպարտիայի նկատմամբ, սոցիալիստներին թույլ չէր տրվում մասնակցելու այն շարժումներին, որոնց մասնակցում էին կոմունիստները։ Սակայն տեղերում ավելի հաճախ սկսեցին իրագործվել համատեղ ելույթները տարբեր հարցերի կապակցությամբ։ Այդ արդեն հնարավոր չէր ժխտել, և այն ժամանակ որոշեցին, որ եթե համատեղ ելույթները օգուտ են տալիս սոցիալիստական պարտիային, ապա նրանց կարելի է մասնակցել»[1]։

ՍՄԿՊ XX համագումարի որոշումները լայն արձագանք գտան բոլոր սոցիալիստական պարտիաների շարքային անդամների մոտ։

Հատկապես մեծ նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ սոցիալիստական երկրների կոմունիստական պարտիաները լայն հնարավորություններ ընձեռեցին սոցիալիստական պարտիաների բազմաթիվ ներկայացուցիչների իրենց երկրները այցելելու և սոցիալիստական շինարարությանը ծանոթանալու համար։

Սոցիալիստական պարտիաների պատվիրակությունները, կամ այդ պարտիաների առանձին անդամներ սկսեցին այցելել ՍՍՌՄ և սոցիալիզմի լագերի մյուս պետությունները և ծանոթանալ նրանց ներքին կյանքին։ Այդ այցելությունները նրանց հնարավորություն տվեցին համոզվելու, որ հակակոմունիզմի պրոպագանդայի հորինած առասպելները «երկաթե վարա-

---

[1] „Проблемы мира и социализма", 1957, № 9, стр. 57.

գույրի», «սովետական ժողովրդի ստրկական, շարքաշ կյանքի» և այլնի մասին բացահայտ հերյուրանք են։ Սոցիալիստական պարտիաների ներկայացուցիչներն իրենց աչքերով տեսնում են այն հսկայական հաջողությունները, որ ձեռք է բերել սովետական ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ։

Միջազգային բանվորական շարժման հնագույն դործիչ Կամիլ Գյուիյամանը անդրադառնալով ՍՄԿՊ XX համագումարի արդյունքներին, հայտարարել է. «Ինձ, հին սոցիալիստիս, որ երկար տարիներ եղել եմ Լենինի և նրա կնոջ՝ Կրուպսկայայի բարեկամը, այդ բոլորը խորը կերպով հուզեց, ես դիտեի Լենինի մտքերը և նրա արժանիքները։ Ես սխալ էի համարում 1917 թվականին մեր միջև տեղի ունեցած պառակտումը»։ «Այդ բոլորը անցյալ է,— ավելացնում է նա,— և ես ոչ մեկին ոչ մի բանում չեմ ցանկանում նախատել։ Բայց ես ցանկանում եմ իմ ամբողջ ուժերով օգնել Եվրոպայում բանվոր դասակարդի միասնության վերականգնմանը»[1]։

Ֆրանսիական սոցիալիստական պարտիայի լիդերներից մեկը՝ Դանիել Մեյերը մի տոիթով հայտարարել է. «Այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ եթե կենսագործվի այն բոլորը, ինչ նշվել է ՍՄԿՊ XX համագումարում և եթե շարժումը շարունակվի այդ ուղղությամբ, ապա այդ համագումարը կըհանդիսանա Արևելքի և Արևմուտքի միջև տնտեսական հարաբերությունների և տարբեր բանվորական շարժումների պատմության ամենակարևոր երևույթներից մեկը»[2]։

Ֆրանսիական սոցիալիստական պարտիայի լիդերներից մեկը՝ Վենսան Օրիոլը այցելելով ՍՍՌՄ, «Ֆրանս-Սուար» թերթում մի հոդվածաշար է հրատարակել իր տպավորությունների մասին։ Նա գրում է, որ «30 տարվա ընթացքում սովետական ժողովուրդը հաղթահարել է երկդարյա հետամնացությունը և իր երկիրը դարձրել աշխարհի հզոր արդյունաբերական պետությունը»[3]։ Սովետական ժողովրդին խորթ են աղքատու-

---

[1] „Правда", 1956, № 111.

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, № 120։

թյունը և ստրկությունը, նշում է նա, դրանով իսկ հերքելով այն բոլորը, որ պրոպագանդում է բուրժուազիան տարիներ շարունակ։

Շվեդական սոցիալ-դեմոկրատական պարտիայի պատվիրակների ՍՍՌՄ այցելելուց հետո հայտնի սոցիալ-դեմոկրատ Գուստավ Նիլսոնը ասել է, որ այն, ինչ որ մենք տեսանք ՍՍՌՄ-ում, արդեն փոխում է մեր շատ խեղաթյուրված պատկերացումները այդ երկրի մասին։ Թվում է, որ դա քիչ չէ։ Այդ ուղղությամբ պետք է մեծ աշխատանքներ տանել։

Պրոլետարիատի միասնության և նրա քաղաքական պարտիաների համագործակցության գաղափարը պաշտպանում են շատ այլ երկրների սոցիալիստական պարտիաների թե բազմաթիվ շարքային անդամներ և թե որոշ ղեկավարներ։

Նորվեգիայի սոցիալիստական պարտիայի գործիչ Կլենուտ Դալաստելը իր մի հոդվածում արծարծելով այն միտքը, որ սոցիալիզմի հիմնական սկզբունքներից մեկը եղել է և պետք է լինի բանվոր դասակարգի միասնության հարցը, քննադատում է նրանց, ովքեր մոռացել են այդ անհրաժեշտ ճշմարտությունը։ Նկատի ունենալով սոցիալիստական պարտիաների որոշ լիդերների, նա գրում է, որ նրանք «այժմ այլևս չեն խոսում բոլոր երկրների բանվորների միջազգային համերաշխության մասին, այլ համերաշխություն են քարոզում «Ատլանտյան պակտի հետ», այլ խոսքերով ասած, համերաշխություն արևմուտքի գերկապիտալիստական տերությունների հետ, որոնց հետ միասին մենք մտնում ենք ՆԱՏՕ-ի մեջ»[1]։

Խոսելով երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված դրության մասին, երբ ամենուրեք զբաղվում են հակակոմունիստական և հակասովետական պրոպագանդայով, նա գրում է, որ եթե խոր մտածենք, ապա այնպիսի եզրակացության կգանք, որ մենք սոցիալիստներս ոչ միայն մեզ մոտ, այլև Արևմտյան Եվրոպայում գտնվում ենք կեղծ դրության մեջ, որի մեղքն առաջին հերթին մեզ վրա է ընկնում։

Սակայն Սոցիալիստական Ինտերնացիոնալի լիդերները

---

[1] „Правда", 1957, № 11.

հանդես են գալիս կոմունիստական և սոցիալիստական պարտիաների համագործակցության դեմ։

1956 թ. մարտի 2—4-ը Ցյուրիխում տեղի ունեցած Սոցիալիստական Ինտերնացիոնալի Սովետի նիստում, որտեղ քննարկվում էր ՍՄԿՊ XX համագումարի արդյունքները, բանաձև ընդունվեց ընդդեմ սոցիալիստների և կոմունիստների միջև կոնտակտների և համագործակցության հաստատման։ Նույնպիսի դիրքորոշում ընդունվեց նաև 1956 թ. ապրիլի 7-ին Լոնդոնում տեղի ունեցած Սոցիալիստական Ինտերնացիոնալի բյուրոյի բանաձևում, որտեղ նշվում էր, որ «սոցիալիզմը և կոմունիզմը ոչ մի ընդհանուր բան չունեն»։

Հակակոմունիզմը դարձել է սոցիալ-դեմոկրատական պարտիաների մի շարք ղեկավարների գործունեության առանցքը։

Անգլիական լեյբորիստական պարտիայի ղեկավար Հ. Գեյտսկելլը գրել է. «Լեյբորիստական պարտիան սկզբից ենթ միշտ վճռականորեն հանդես է եկել կոմունիստական պարտիայի դեմ և միշտ հաջողությամբ դիմադրել է միասնական ճակատ ստեղծելու նրա փորձերին»։ Իսկ Ֆրանսիական հայտնի աջ սոցիալիստ Լ. Բլյումը դեռ 1949 թ. վերջերին հայտարարել է, թե իրը սոցիալիստական աշխարհին գլխավոր վտանգը սպասվում է ոչ թե ֆաշիզմից, որը քանի գնում ավելի և ավելի թուլանում է, այլ կոմունիզմից։

Նրանցից ավելի առաջ է գնում Արևմտա-գերմանական սոցիալ-դեմոկրատ Կ. Շմիդտը, որը 1953 թ. նոյեմբերի 20-ին ռադիոյով ունեցած ելույթի ժամանակ կոչ էր անում «դեն նետել մարքսիզմի մեռած բեռը» և այլն։

Սոցիալիստական Ինտերնացիոնալի ընդունած որոշումը կարծես թե սառը ջուր է լցնում սոցիալիստական պարտիաների շարքային անդամների և որոշ ղեկավար գործիչների վրա, ոչ մի կերպ չարտահայտելով նրանց շահերն ու իղձերը։

Սակայն պետք է նշել, որ սոցիալիստական պարտիաների շարքերում և հենց Ինտերնացիոնալում համարձակ ձայներ են լսվում ընդդեմ աջ սոցիալիստների նման վարքագծի։

Անգլիական պառլամենտի անդամ, լեյբորիստուհի Բարբարա Կասլը Սոցիալիստական Ինտերնացիոնալի Սովետի սեսիայում հայտարարեց, որ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի կոչին արևմտյան սոցիալիզմի կողմից պետք է դրական պատասխան տրվի։

Շվեյցարական սոցիալ-դեմոկրատական պարտիայի լիդերներից Էմբեր Դրոն գրել է. «Եթե աշխատավոր սոցիալիստները և կոմունիստները ցանկանում են ստեղծել միասնական կամ ժողովրդական ճակատ, ապա Սոցիալիստական Ինտերնացիոնալը այդ հարցում չպետք է նրանց խանգարի, այնպես, ինչպես Կոմունիստական ղեկավարները չպետք է նրանց հարկադրեն։ Անհրաժեշտ է, որպեսզի և մեկը և մյուսը ազատ լինեն լուծելու այդ հարցը»[1]։

Արտասահմանյան երկրների պարտիական և պետական պատվիրակությունների ընդունելու հետ մեկտեղ, սոցիալիզմի երկրները ևս իրենց պատվիրակություններն են ուղարկում արտասահմանյան երկրներ։

1956 թ. Անգլիա ժամանեց ՍՍՌՄ դելեգացիան, որի կազմի մեջ էր նաև ՍՄԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար Ն. Ս. Խրուշչովը։

Անգլիայի Լեյբորիստական պարտիայի ղեկավարությունը ընդունելություն կազմակերպեց ի պատիվ Սովետական Միության կառավարական դելեգացիայի։ Սակայն հանդիպման ժամանակ Գեյտսկելլը և Բրաունը «կարծիքների անկեղծ փոխանակման անվան տակ» կոպիտ հարձակումներ գործեցին ՍՍՌՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ, երբ սովետական ղեկավարները արժանի հակահարված տվեցին, լեյբորիստները փորձեցին սկանդալ սարքել, բայց այն վերջացավ անհաջողությամբ։

Մայիսի 6-ին Գեյտսկելլը հանդես եկավ «Ռուսները և մենք» վերնագրով հոդվածով, որի մեջ կրկնելով ճաշկերույթի ժամանակ արած զրպարտությունները, գրում էր. «Կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների միջև չի կարող համագործակցություն կամ բարեկամություն լինել»։

---

[1] „Правда". 1956, № 111.

Սա, իհարկե, ջուր է լցնում բուրժուազիայի ջրաղացին։ Եվ պատահական չէ, որ բուրժուական թերթերը այդ խմբին սկսեցին դավերդել որպես «դեմոկրատիայի մարտիկների»։

Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ Լեյբորիստական պարտիայի ղեկավարները ոտնահարում են պարտիական շարքային անդամների մեծամասնության շահերը և հաշվի չեն նստում նրանց կարծիքի հետ։

Լեյբորիստական պարտիայի Գործկոմի անդամ Է. դիտ Սամերսկիլլը հանդես գալով Լիվերպուլի լեյբորիստական ուսանողական կազմակերպության առաջ, քննադատեց լեյբորիստական պարտիայի այն ղեկավարներին, որոնք իրենց անբարյացակամ էին պահել ճաշկերույթի ժամանակ։

Է. Սամերսկիլը ասաց, որ լեյբորիստների ղեկավարները կատարելով այդ անվայել քայլը դրանով վարկաբեկում էին ոչ միայն հյուրերին, այլև ամբողջ լեյբորիստական պարտիային։

Լեյբորիստական պարտիայի որոշ ղեկավարների վարքագծի նույնպես սուր, անողոք քննադատությամբ հանդես եկավ անգլիական պառլամենտի անդամ լեյբորիստ Ջիլլիակուսը։

Պառլամենտի անդամ լեյբորիստ Անտոնի Գրինվուդը 1956 թ. մայիսի 6-ին Մանչեստրում տեղի ունեցած միտինգի ժամանակ ասաց. «...մենք պետք է ապացուցենք, որ կոմունիզմը, սոցիալիզմը և կապիտալիզմը կարող են խաղաղ կերպով, կողք-կողքի գոյակցել։ Մենք՝ ոչ մի բանի չենք հասնի, եթե բացասական դիրք բռնենք և բավարարվենք ռուսներին կոպտելով»։

Սոցիոլոգ, բանվորական շարժման մասին մի շարք աշխատությունների հեղինակ, լեյբորիստ Ջոն Կոուլը գրում էր. «Սոցիալ-դեմոկրատները պատրաստ պետք է լինեն բարեկամության ձեռք մեկնելու մարդկանց, որոնց հետ, չնայած նրանց բոլոր տարաձայնություններին, շատ ընդհանուր բան ունեն»։

Նա ավելացնում է, որ առանձին կոմունիստները և սոցիալիստները ավելի հաճախ պետք է հանդիպեն և լուրջ զը-

բույցներ ունենան որպեսզի կարողանան ժամանակի ընթացքում հաջողությամբ բաղա ստեղծել «...բանվոր դասակարգի միջազգային շարժման միավորման համար, կապիտալիզմի իմպերիալիզմի և ռեակցիայի դեմ մղվող պայքարի ընդհանուր գործի համար»[1]։

Բնական է, որ ներկա պայմաններում, սոցիալիստական պարտիայի ոչ մի ղեկավարի գործունեություն՝ ուղղված կոմունիստների և սոցիալիստների համագործակցության դեմ, չի կարող չդնահատվել որպես դավաճանություն բանվոր դասակարգի շահերին։

Այդ տեսակետից էլ պատահական չէ, որ 1956 թ. մայիսի 5-ին «Ռեյտեր» գործակալությունը ստիպված էր նշել, որ «պարտիայի շատ շարքային անդամներ քննադատում են իրենց ղեկավարներին նրանց վարքագծի համար»։ Գործակալությունը ընդգծում էր, որ «պարտիայի լիդեր Խյու Գեյտսկիլը իր կողմնակիցների զգալի մասի մոտ կորցրել է հեղինակությունը»։

Հանդիպումներ տեղի ունեցան նաև Ֆրանսիայի սոցիալիստական պարտիայի ներկայացուցիչների հետ, որոնք ՍՍՌՄ-ում մնացին 1956 թ. ապրիլի 28-ից մայիսի 14-ը։ Նրանք մասնակցեցին մայիսմեկյան տոնակատարությանը, եղան Լենինգրադում, Կիևում, Բրիլիսիում, Խարկովում, Օդեսայում, այցելեցին տարբեր ֆաբրիկաներ, գործարաններ, կոլտնտեսություններ, սովխոզներ և ուսումնական հաստատություններ։ Համաձայն իրենց ցանկության Ֆրանսիական սոցիալիստները եղան ընտանիքներում, ակումբներում և անգամ բանտերում։ ՍՍՌՄ-ում նրանց շրջագայության ծրագիրը կազմված էր համաձայն իրենց ցանկության։

Ֆրանսիայի սոցիալիստական պարտիայի պատվիրակների հետ բանակցություններ վարելու համար ստեղծվել էր ՍՄԿՊ Կենտկոմի դելեգացիա, որի մեջ մտնում էին Խրուշչովը, Միկոյանը, Սուսլովը և ուրիշներ։

Մայիսի 12-ին եղրափակիչ զրույց տեղի ունեցավ Ֆրան-

---

[1] „Правда", 1956, № 129.

սիական սոցիալիստների և ՍՄԿՊ Կենտկոմի նախագահության անդամների միջև։

Այնուհետև հրատարակվեց երկու պարտիաների պատվիրակությունների համատեղ կոմյունիկեն, որում հույս էր հայտնվում, որ տարբեր իդեալական դիրքերից ելնող հարցերի քննարկման ժամանակ յուրաքանչյուր պարտիա պետք է հանդես բերի մաքսիմում օբյեկտիվություն, խուսափելով անարդարացի հարձակումներից, որը կարող է վնաս հասցնել անհրաժեշտ փոխըմբռնմանը։

«ՍՄԿՊ և ՍՖԻՕ պատվիրակությունները համաձայնեցին, որպեսզի իրենց պարտիաների Կենտրոնական Կոմիտեների առաջ հարց բարձրացնեն երկու պարտիաների միջև ապագայում կոնտակտները շարունակելու մասին, նպատակ ունենալով կարծիքներ փոխանակել Մոսկվայում շոշափված պրոբլեմների շուրջը, որոնք վերաբերում են Ֆրանսիայի և ՍՍՌՄ-ի բանվոր դասակարգի և ժողովուրդների կենսական շահերին»[1]։

1956 թ. մայիսի 15-ին Մոսկվա ժամանեցին Գի Մոլլեն և Քրիստիան Պինոն։ Բանակցություններ տեղի ունեցան ՍՄԿՊ Կենտկոմի հետ, որից հետո Ք. Պինոն շրջագայեց ՍՍՌՄ մի շարք քաղաքներում։

Ընդհանուր առմամբ Ֆրանսիայի սոցիալիստական պարտիայի պատվիրակության ՍՍՌՄ դալը ունեցավ դրական նշանակություն։ Նրա հիմնական արդյունքը եղավ այն, որ ամբողջ աշխարհին ցույց տվեց կոմունիստների և սոցիալիստների միջև կոնտակտների և կարծիքների փոխանակման հնարավորությունը։

Այժմ ինչքան էլ հակակոմունիստական ագիտացիա տարվի, միևնույն է, շարքային սոցիալիստները իրենք իրենց հարց կտան, թե ինչու իրենք չեն կարող կոմունիստների հետ քննարկել հուզող հարցերը, երբ իրենց ղեկավարները այդ անում են կոմունիստների ղեկավարների հետ։

Ֆրանսիական սոցիալիստների Մոսկվայում գտնված ժամանակ, երբ նրանց հարց տվին, թե ինչու սոցիալիստական

---

[1] „Правда", 1956, № 135.

մամուլում զրպարտչական հոդվածներ են տպվում ՍՍՌՄ-ի մասին, Ֆրանսիայի սոցիալիստական պարտիայի հայտնի գործիչ Պ. Կոմմենը պատասխանեց, որ այսուհետև այդպիսի բաներ չեն լինի։

Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Ֆրանսիական սոցիալիստները չեն կատարում իրենց տված խոստումը։

Պատվիրակության անդամների մի մասը Ֆրանսիա վերադառնալուց հետո իրենց ելույթներում ցանկանում էր ապացուցել, թե իբր կապիտալիստական հասարակարգում մարդը ավելի լավ է ապրում, քան սոցիալիստական երկրում։

Ամենայն հավանականությամբ այս բոլորը կատարվում է բանվորական շարժման պատակտումը հավերժացնելու համար, կոմունիստների հետ համագործակցության ձգտող սոցիալիստների վրա սառը ջուր լցնելու համար։ Հակառակ դեպքում ոչնչով չի կարելի բացատրել այն փաստը, որ Պ. Կոմենը և Ս. Ֆիլիպը Ֆրանսիա հասնելուց անմիջապես հետո հայտարարեցին, թե ՍՍՌՄ-ում ընդհանրապես «սոցիալիզմ չկա» և նորից մեջտեղ հանեցին պետական կապիտալիզմի մասին արդեն բավականին հնացած երգերը։

Հետաքրքրական է այն, որ Ֆրանսիական սոցիալիստական պարտիայի ղեկավարությունը, որն օրն ի բուն խոսում է դեմոկրատիայի, մտքերի ազատության, մամուլի ազատության և այլնի մասին, իր պարտիայի ներսում հաստատել է բռնապետական ռեժիմ։ 22 տարվա պարտիական ստաժ ունեցող Էյուսեն Վեյյը պարտիայից վտարվեց այն բանի համար, որ նա լեյբորիստների «Տրիբյուն» թերթում մի քանի քննադատական հոդվածներ էր հրատարակել սոցիալիստների մասին։

«Տրիբյուն» թերթը այդ կապակցությամբ գրում է. «Կարգապահությունը Ֆրանսիական սոցիալիստական պարտիայի կողմից օգտագործվում է նրա համար, որպեսզի բոլորի վզին փաթաթի այնպիսի քաղաքականություն, որը երբեք հավանություն չի գտել ՍՖԻՕ-ի ոչ մի համագումարի կողմից։

Ինչ վերաբերում է ՍՖԻՕ-ի Ազգային Սովետին որի մեջ մտնում են միայն պարտիայի մարզային կազմակերպությունները

ների քարտուղարները և ղեկավար կոմիտեի անդամները, ապա այն հնարավորություն չունի արտահայտելու պարտիայի շարքային անդամների կարծիքը»[1]։

Եվ իրոք, մի՞թե Սուեզի կամ Ալժիրի հարցում ՍՖԻՕ-ի ղեկավարության վարած քաղաքականությունը կարող է հանդիսանալ ամբողջ սոցիալիստական պարտիայի քաղաքականությունը։ Բնական է, որ ոչ։

Սակայն սոցիալիստական պարտիաների ղեկավարների հակակոմունիստական քաղաքականությունը դատապարտված է ձախողման։ Ավելի և ավելի հզոր է հնչում սոցիալիստական պարտիաների շարքային անդամների ձայնը, որի ճնշման տակ ղեկավարները սկսում են զիջումներ կատարել։ Սոցիալիստական պարտիաների ղեկավարների հակասոցիալիստական քաղաքականության հետ միասին պառակտումներ են առաջ գալիս այդ պարտիաների շարքերում։ Հատկապես սուր հակասություններ կան Ֆրանսիայի սոցիալիստական և Անգլիայի լեյբորիստական պարտիաների շարքերում։

Աճում են հակասությունները Սոցիալիստական Ինտերնացիոնալի պարտիաների մեջ։ Ավելի սուր կերպով են իրենց զգալ տալիս Սոցիալիստական Ինտերնացիոնալի և Ասիայի ու Աֆրիկայի սոցիալիստական պարտիաների հակասությունները։

1956 թ. Անգլիայի, Ֆրանսիայի և Իսրայելի՝ Եգիպտոսի դեմ սկսած ագրեսիայի կապակցությամբ լուրջ պառակտումներ առաջացան սոցիալիստական պարտիաների շարքերում։ Եթե Ֆրանսիայի և Իսրայելի սոցիալիստները այնպիսի քայլ արեցին, որը ոչ մի կապ չուներ սոցիալիզմի սկզբունքների հետ, ապա միևնույն ժամանակ սոցիալիստական պարտիաների բազմաթիվ շարքային անդամներ և ղեկավար դործիչներ հանդես եկան Եգիպտոսում կատարված ագրեսիայի քննադատությամբ։ Հատկապես սուր կերպով հանդես եկան Ասիայի և Աֆրիկայի սոցիալիստները, որը միայն կերպով դրսևորվեց Ասիայի երկրների սոցիալիստների 1956 թ. նո-

---

[1] „Правда", 1957, № 14.

յեմբերին Բոմբեյում կայացած կոնֆերանսում։ Ֆրանսիայի և Իսրայելի սոցիալիստների քաղաքականության քննադատությամբ հանդես եկան նաև անգլիական լեյբորիստները, Արևմտյան Գերմանիայի, Նորվեգիայի և ուրիշ շատ երկրների սոցիալիստական պարտիաներ։ Ֆրանսիայի սոցիալիստական պարտիայի շարքերում ավելի ակտիվացան օպոզիցիոն տարրերը, որոնք դժգոհ էին Գի Մոլլեի քաղաքականությունից։

Եվ փաստորեն 1956 թ. վերջերին ամբողջ միջազգային կոմունիստական և սոցիալիստական շարժումը բացառությամբ ՍՖԻՕ-ի, հանդես եկավ միասնական ճակատով, ընդդեմ Եգիպտոսի դեմ կազմակերպված ագրեսիայի, դրանով իսկ մեկ անգամ ևս ցույց տալով, որ միասնական գործողությունները լիովին հնարավոր են։

1956 թ. դեկտեմբերի սկզբին, միջազգային բանվորական շարժման ուժեղ ճնշման տակ Եգիպտոսի դեմ կատարված ագրեսիայի հարցը դրվեց Սոցիալիստական Ինտերնացիոնալի Կոպենհագենի նիստում, որտեղ ընդունվեց մի բանաձև, որը թեև թույլ, բայց այնուամենայնիվ դատապարտեց ագրեսիան։

Երբ առաջին տարիներին Սոցիալիստական Ինտերնացիոնալը պաշտպանում էր «Եվրոպական բանակի» նախագիծը, և բոլոր այլ ագրեսիվ պլանները, ապա վերջին տարիներս դեմոկրատիայի և սոցիալիզմի ուժերի աննախընթաց աճի ազդեցության տակ Սոցիալիստական Ինտերնացիոնալը սկսում է, գոնե խոսքերով լուրջ վիճումներ անել։

1957 թ. հուլիսի 2—6-ը Վիեննայում տեղի ունեցած Սոցիալիստական Ինտերնացիոնալի V կոնգրեսն արտահայտվեց հօգուտ զինաթափման և ատոմային զենքի փորձարկման դադարեցման շուրջը համաձայնագիր կնքելու։

Օլենհաուերը կոնգրեսում պաշտպանելով Գերմանիայի միավորման հարցում «ազատ ընտրությունների» իդեան, միևնույն ժամանակ ակտիվ կերպով պաշտպանեց այն միտքը, որ Արևմտյան Գերմանիան չպետք է մտնի ՆԱՏՕ-ի մեջ։ «Մենք գերմանական սոցիալ-դեմոկրատներս նշում ենք անվտանգության եվրոպական սիստեմի ստեղծման անհրաժեշտությունը», ասաց Օլենհաուերը։

Միջազգային դրության մասին ընդունված բանաձևում մտցվեց Չինաստանին ՄԱԿ-ի կազմում ընդունելու պահանջը։

Սուր վիճաբանություններ ծագեցին Մերձավոր Արևելքում տիրող դրության և Ասիայի ու Աֆրիկայի ազգային-ազատագրական պայքարի հարցերի քննարկման ժամանակ։ Մերձավոր Արևելքի դրության կապակցությամբ ելույթ ունեցած Իսրայելի սոցիալիստական պարտիայի պատվիրակը ամբողջ մեղքը դցեց արաբական պետությունների վրա, չնայած սուր առարկություններին, ընդունված բանաձևում արտահայտվում էր Իսրայելի պատվիրակի կարծիքը։ Դեմ քվեարկեց միայն Ճապոնիայի սոցիալիստական պարտիայի պատվիրակությունը, որը 1957 թ. հունվարին պահանջել էր Ինտերնացիոնալի կազմից վտարել Ֆրանսիայի և Իսրայելի սոցիալիստական պարտիաներին։

Ալժիրի հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Նորվեգիայի բանվորական պարտիայի ներկայացուցիչ Ֆիննն Մուն, որը դատապարտեց Ֆրանսիական կառավարության դիրքը։ Նրան ակտիվ կերպով պաշտպանեց Է. Բիվենը։ Սակայն ընդունված բանաձևում փաստորեն խույս տրվեց այդ հարցին ուղղակի պատասխան տալուց։

V կոնգրեսում Ինտերնացիոնալի պրեզիդենտ ընտրվեց Անդերսենը (Դանիա), վիցե-պրեզիդենտներ՝ Օլենհաուերը, Գեյտսկելլը և Գի Մոլլեն։

Ինտերնացիոնալի V կոնգրեսը ցույց տվեց, որ նրա ղեկավարությունը առաջվա նման շարունակում է վարել հակակոմունիստական կուրս։ Միևնույն ժամանակ պարզ կերպով երևացին այն նոր երևույթները, որոնք տեղի են ունենում միջազգային սոցիալիստական շարժման շարքերում հօգուտ պրոլետարիատի միասնության, խաղաղության, առաջադիմության և սոցիալիզմի։

Ահա այս երևույթներն ի նկատի ունեն կոմունիստական պարտիաները, որոնք կանգ չառնելով ոչ մի դժվարության առջև, համառ կերպով աշխատանք են տանում սոցիալիստական պարտիաների հետ կապիտալի դեմ մղվող պայքարում միասնական ճակատ ստեղծելու համար։

Նորից շարունակվում են հանդիպումներն ու բանակցությունները սոցիալիստական պարտիաների ղեկավարների հետ։ ՍՍՌՄ են այցելում սոցիալիստական պարտիաների առանձին ղեկավարներ և պատվիրակություններ։ ՍՍՌՄ են այցելել Ճապոնիայի սոցիալիստական պարտիայի, Անգլիայի լեյբորիստների, Բելգիայի, Դանիայի և շատ ուրիշ երկրների սոցիալիստական պարտիաների պատվիրակություններ։

Բելգիայի սոցիալիստական պարտիայի հայտնի գործիչ Անդրե Ռենարը գրում է. «Այժմ, կոլտնտեսություն այցելելուց հետո, ես զգում եմ, որ կոլտնտեսությունը գյուղացիության ազատագրման միակ միջոցն է»[1]։

Ճապոնիայի սոցիալիստական պարտիայի պատվիրակությունը ՍՍՌՄ-ում գտնվեց 1957 թ. սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 12-ը, եղավ Մոսկվայում, Իրկուտսկում, Օմսկում, Սվերդլովսկում, Կիևում, Սոչիում, Լենինգրադում և այլ վայրերում, ծանոթացավ կոլտնտեսությունների, սովխոզների, կուլտուրական և հասարակական կազմակերպությունների կյանքին։ Պատվիրակության անդամները հանդիպում ունեցան Ն. Խրուշչովի, Ա. Միկոյանի, Մ. Սուսլովի և ուրիշների հետ։

Բանակցությունների ընթացքում երկու կողմերն էլ եկան այն եզրակացության, որ պետք է իրենց երկրների միջև ստեղծել առևտրական հարաբերություններ, շրջափակելով էպիզոդիկ ապրանքափոխանակությամբ, զարգացնել կապերը գիտության, տեխնիկայի, արվեստի և սպորտի բնագավառում։

Երկու կողմերն էլ պատրաստակամություն հայտնեցին պայքարելու միջազգային լարվածությունը թուլացնելու համար, պաշտպանելու Բանդունգի կոնֆերանսում ընդունված խաղաղ գոյակցության սկզբունքները, արգելելու ատոմային և ջրածնային զենքը, ՉԺՌ-ն ընդունելու ՄԱԿ-ի կազմում։

«Պատվիրակությունը համոզվեց, որ Սովետական Միության քաղաքներում և գյուղերում սոցիալիստական շինարա-

---

[1] „Правда". 1956, № 210.

ությունը ձեռք է բերել ավելի ու ավելի մեծ հաջողություններ և որ ոչ միայն զինվորների, այլև բնակչության բոլոր խավերի ջերմ ցանկությունն է պատերազմներից խուսափելու և հաշտ ու խաղաղ ապրելու ձգտումը»[1], — ասվում էր Ճապոնիայի սոցիալիստական պարտիայի ՍՍՌՄ կատարած այցելության կապակցությամբ արված հայտարարության մեջ։

Ճապոնական սոցիալիստական պարտիայի ներկայացուցիչների արած հայտարարություններում ընդգծվում էր իրենց այցելության օգտակարությունը։

Պատվիրակության անդամ Յոիտի Յամատոն ասաց. «Ես խորապես զգացի, որ Սովետական Միությունում կյանքը շատ կայուն է։ Ես համոզվեցի, որ Սովետական կառավարությունը և պարտիան լայն պրոպագանդա են մղում հօգուտ ամբողջ աշխարհի խաղաղության պաշտպանության, և խաղաղության այդ ձգտումը խորապես թափանցել է ժողովրդի բոլոր խավերը»։

Յուձո Ավայան խոսելով հակակոմունիզմի՝ կոլտնտեսային կարգի մասին տարածած առասպելների մասին, հայտարարեց. «Տեղում՝ գյուղերում ես համոզվեցի, որ կոլտնտեսությունները ինչ-որ եզակի, ցուցադրական տնտեսություններ չեն։ Ես հիացմունքով համոզվեցի, որ կոլտնտեսային կարգը լիովին թափանցել է սովետական գյուղը»։

Լավ տպավորություններով գնացին նաև Անգլիայի լեյբորիստական պարտիայի ներկայացուցիչները, որոնք ՍՍՌՄ այցելեցին 1959 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին։

Ինչպես ՍՄԿՊ, այնպես էլ աշխարհի մյուս կոմունիստական և բանվորական պարտիաների կենտկոմները համառ ջանքեր են թափում սոցիալիստական պարտիաների հետ կոնտակտներ հաստատելու ուղղությամբ։

Միջազգային իրադրության ցավոտ հարցերի և տարբեր երկրներում այս կամ այն լարված իրադրության պայմաններում կոմունիստները զիմում են սոցիալիստներին միասին պայքարելու իմպերիալիզմի հարձակման դեմ։

---

[1] „Правда", 1957, № 286.

1957 թ. աշնանը Մերձավոր Արևելքում Սիրիայի դեպքերի շուրջը ստեղծված ծանր դրության կապակցությամբ ՍՄԿՊ Կենտկոմը դիմեց Ֆրանսիայի, Իտալիայի, ԳԴՀ-ի, Դանիայի, Բելգիայի և Հոլանդիայի սոցիալիստական պարտիաների կենտկոմներին, առաջարկելով ակտիվ գործունեություն ծավալել իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականությունը պատապարտելու և Մերձավոր Արևելքում կայուն խաղաղություն հաստատելու համար։

Ֆրանսիայի սոցիալիստական պարտիային ուղղված դիմումում ասվում էր, որ նկատի ունենալով ֆրանսիական սոցիալիստական պարտիայի կոնգրեսներում ընդունված կապիտալիստական, իմպերիալիստական ճնշումից զաղութային ժողովուրդների ազատագրման անհրաժեշտության ընդունումը, Մերձավոր և Միջին Արևելքում կայուն խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունը, ՍՄԿՊ Կենտկոմը կարծում է, որ Ֆրանսիայի սոցիալիստական պարտիան կդատապարտի ագրեսիվ շրջանների քաղաքականությունը։

«Հաշվի առնելով այն ցանկությունը, որ մեր երկու պարտիաների պատվիրակությունները 1956 թ. մայիսի 14-ի համատեղ կոմյունիկեով հայտնեցին առաջիկայում շարունակելու պարտիաների կոնտակտները Ֆրանսիայի և ՍՍՌՄ-ի բանվոր դասակարգի ու ժողովուրդների կենսական շահերը շոշափող հարցերում, և առաջին հերթին միջազգային լարվածության մեղմացման ու խաղաղության ամրապնդման հարցերում, ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեն անհրաժեշտ է համարում Ֆրանսիայի սոցիալիստների ուշադրությունը հրավիրել խաղաղության գործի համար Մերձավոր Արևելքում առկա վտանգի վրա։ Պետք է միավորել բոլոր նրանց ջանքերը, որոնց համար թանկ է խաղաղությունը, որպեսզի վճռականորեն դատապարտելով ուժի գործադրումը, որպես չկարգավորված հարցերի լուծման միջոց, թույլ չտրվի խաղաղության խախտում Մերձավոր և Միջին Արևելքի շրջանում։ Խաղաղության ուժերը միավորվելով կարող են և պետք է հաղթահարեն ագրեսիայի ու պատերազմի ուժերին»[1]։

---

[1] «Սովետական Հայաստան», 1957, № 247։

Այդ դիմումները սոցիալիստական պարտիաներում մեծ աճադանք դուան, սուր վիճաբանություններ առարկա դարձան։ Եվ եթե Հոլանդիայի և Բելգիայի սոցիալիստական պարտիաների ղեկավարները բացասական պատասխան տվին այդ դիմումներին, ապա ԳԾՌ-ի, Անգլիայի և Իտալիայի սոցիալիստական պարտիաների ղեկավարների պատասխաններում տեղ էր թողնվում հետագա կոնտակտների համար։

Սակայն անհրաժեշտ է նշել, որ սոցիալիստական պարտիաների հետ միասնական ճակատ ստեղծելու ուղղությամբ ձեռք բերած հաջողությունները դեռևս մեծ չեն։

Սոցիալ-դեմոկրատական պարտիաների հակակոմունիստական ոգով տրամադրված ղեկավարները, դեմ գնալով հազարավոր շարքային սոցիալիստների ցանկություններին, ավելի և ավելի դեպի աջ են գլորվում։

Նկատելով միջազգային իրադրության մեջ տեղի ունեցած արմատական փոփոխություններից, Եվրոպայի սոցիալ-դեմոկրատական պարտիաները մեկը մյուսի հետևից նոր ծրագրեր են ընդունում։ Վերջին երկու տարվա ընթացքում իրենց ծրագրերն են փոխել Ավստրիայի, Շվեյցարիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի և Արևմտյան Գերմանիայի ռեֆորմիստական պարտիաները։ Ինչ վերաբերում է Ֆրանսիայի, սկանդինավյան երկրների սոցիալ-դեմոկրատական պարտիաներին, ապա նրանք ևս նոր ծրագրեր են մշակում։

Բնականաբար հարց է առաջանում, թե ի՞նչ փոփոխություններ են մտցնում իրենց ծրագրերում այդ պարտիաները, ի՞նչ դասեր են նրանք քաղել բուրժուազիայի և բանվոր դասակարգի վերջին տարիների դասակարգային մարտերի փորձից։

Այդ պարտիաների նոր ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե նախկինում դոնե թղթի վրա ընդունվում էր բանվոր դասակարգի շահերի պաշտպանությունը, բուրժուազիայի դասակարգային տիրապետության վերացումը և արտադրության միջոցների հանրայնացումը, ապա այժմ սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարները հրաժարվել են անգամ դրանից։

Կարելի է առանց սխալվելու ասել, որ սոցիալ-դեմոկրատական պարտիաների նոր ծրագրերում սոցիալիզմից, անդամ նրա ռեֆորմիստական իմաստով, ոչ մի բան չի մնացել։

Պատահական չէ, որ «Վաշինգտոն պոստ էնդ Թայմս Հերալդ» բուրժուական թերթը իր առաջնորդող հոդվածում, որը վերնագրված է «Մարքսիզմի թաղումը» գրում է. «Գերմանական սոցիալ-դեմոկրատիան Գոթայի պատմական համագումարում իր ստեղծումից 84 տարի հետո, Բադ-Գոդեսբերգի համագումարում, հրաժարվեց մարքսիստական իդեոլոգիայից և փաստորեն դադարեց սոցիալիստական լինելուց, այդ բառի իսկական իմաստով»։

Սոցիալ-դեմոկրատական պարտիաների աջ լիդերները ավելի են գլորվում դեպի աջ, դեպի բուրժուազիան։ Այդ պարտիաները գտնվում են ճգնաժամային դրության մեջ։ Ուժեղ պայքար է տեղի ունենում այդ պարտիաների ներսում, որը երբեմն հասցնում է աջ և ձախ թևերի լրիվ պառակտմանը և առանձին պարտիաների ստեղծմանը։ Հազարավոր շարքային սոցիալիստներ դժգոհ իրենց լիդերների քաղաքականությունից, դուրս են գալիս այդ ռեֆորմիստական պարտիաների շարքերից։ Ֆրանսիական սոցիալիստական պարտիան 1945—1958 թթ. կրճատվեց մոտ 3 անգամ, գերմանական սոցիալ-դեմոկրատիան կորցրեց իր անդամների մեկ երրորդը։ Նույն անմխիթար դրությունն է տիրում նաև մյուս սոցիալ-դեմոկրատական պարտիաներում։

Սոցիալ-դեմոկրատական պարտիաների նոր ծրագրերի դեմ դուրս եկան մեծ թվով շարքային սոցիալիստներ։ Այս հանգամանքը նորից մեկ անգամ ցույց է տալիս այն, որ այդ պարտիաների ղեկավարների և շարքային անդամների զգալի մասի միջև գոյություն ունեն խոր հակասություններ։ Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի Բադ-Գոդեսբերգի համագումարում արտադրության միջոցների հանրայնացման առաջարկի օգտին, որը չընդունվեց, քվեարկեց պատգամավորների մեկ երրորդը։ Այդպիսի փաստերը բազմաթիվ են։

Համաշխարհային սոցիալ-դեմոկրատիայի շարքերում կատարվող աջ տեղաշարժը կարող է այն սխալ կարծիքը

ստեղծել, թե օրակարգից պետք է հանել սոցիալիստական պարտիաների լիդերների հետ կոնտակտներ հաստատելու հարցը։

Դա հիմնովին սխալ է։

Դժվար է, իհարկե, գործ ունենալ հակակոմունիստական ոգով տրամադրված սոցիալ-դեմոկրատական պարտիաների ղեկավարների հետ, սակայն խաղաղության, դեմոկրատիայի, բանվոր դասակարգի շահերի պաշտպանության և այլ խնդիրների իրականացման համար մղվող պայքարում, անհրաժեշտ է, չնայած իդեոլոգիական խոշոր տարաձայնություններին, հասնել բանվոր դասակարգի գործողությունների միասնությանը։

ՍՄԿՊ XXI արտահերթ համագումարում Ն. Ս. Խրուշչովն ամփոփելով ՍՄԿՊ XX համագումարից հետո այդ ուղղությամբ կատարված աշխատանքները, ասաց. «Ով է արգելակում բանվոր դասակարգի միասնության գործը։ Իմպերիալիստական ռեակցիան և բանվորական շարժման մեջ նրա այնպիսի գործակիցները, ինչպիսիք են, օրինակ, սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխներ Դի Մոլլեն և Սպաակը, որոնք հակակոմունիստական տրամադրություններով են համակված։ Հակակոմունիզմի այդ բոլոր պարագլուխներին մենք անուն առ անուն գիտենք և նրանց վրա չենք դնում մեր հույսը, երբ խոսում ենք բանվոր դասակարգի գործողությունների միասնության մասին։ Սոցիալ-դեմոկրատական պարտիաների շարքերի մեծամասնությունը կազմում են խաղաղության և սոցիալական առաջադիմության կողմնակիցները, թեպետ նրանք այդ ուղին պատկերացնում են այլ կերպ, քան մենք՝ կոմունիստներս։ Հենց ռեակցիայի և ֆաշիզմի դեմ մղվող պայքարում հարկավոր է, որ կոմունիստներն ու սոցիալ-դեմոկրատներն ընդհանուր լեզու գտնեն։ Հասել է ժամանակը, որ բանվորական շարժման բոլոր հոսանքների ներկայացուցիչները, դեն նետելով հակակոմունիզմի ձեռնածուներին, մի սեղան նստեն և մշակեն իրենց շահերի պաշտպանության, խաղաղության պաշտպանության բնագավառում բանվոր դա-

սակարգի համատեղ գործողությունների փոխադարձ ընդունելի պլատֆորմ»[1]։

Մարդկության դլխին կախված է ահավոր պատերազմի վտանգը։ Միայն բանվոր դասակարգի և նրա քաղաքական պարտիաների համախմբվածությունը կարող է կանխել պատերազմը և փրկել դարերի ընթացքում ստեղծված մարդկային արժեքները և մարդկությունը մեծամեծ կորուստներից.

Այն քաղաքական պարտիաները կամ Դի Մոլլեի, Սպակի, Տաննների և Պոլլակի նման դավաճանները, որոնք հանդես կգան ռլրոլետարիատի պահանջների դեմ, խիստ կերպով կդատապարտվեն և դուրս կշպրտվեն պատմական արենայից։

Պատմության զարդացման ընթացքն անողոք է։

---

[1] Ն. Ս. Խրուշչով, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարդացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, էջ 119 - 120։

ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԸ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎՏԱՆԳՆ Է

Միջազգային կոմունիստական շարժումը աճել և ամրապնդվել է օպորտունիզմի դեմ մղվող պայքարում։ Առանց ռևիզիոնիզմի և դոգմատիզմի դեմ մղվող սուր պայքարի, առանց օպորտունիզմի ջախջախման միջազգային կոմունիստական շարժումը չի կարող հաջողության հասնել։

Ինչպես ցույց է տալիս միջազգային կոմունիստական շարժման պատմության ուսումնասիրությունը, նրա զարգացման ամեն մի նոր էտապում, շրջադարձում քիչ թե շատ նոր հարցերի առաջքաշման ժամանակ կոմունիստական պարտիաների շարքերում իր բազմազան ձևերով դլուխ է բարձրացնում ռևիզիոնիզմը։

Վ. Ի. Լենինը գրել է, որ «...յուրաքանչյուր քիչ թե շատ «նոր» հարց, անցքերի քիչ թե շատ անսպասելի ու անակնկալ շրջադարձ, թեկուզ այդ շրջադարձը միայն փոքր չափով և ամենակարճ ժամանակով փոխի զարդացման հիմնական դիծը, անխուսափելիորեն միշտ առաջ կբերի ռևիզիոնիզմի այս կամ այն տարատեսակներ»[1]։

Անհատի պաշտամունքի պատճառով մինչև ՍՄԿՊ XX համագումարը կոմունիստական շարժման շարքերում որոշ չափով իրեն զդացնել է տալիս դոգմատիզմը, որը հնարավորություն չէր տալիս ամբողջ թափով վեր հանելու կոմունիստական շարժման առանձին ջոկատների առջև կանգնած հրա-

---

[1] *Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 30։*

տապ խնդիրները և համապատասխան յուրաքանչյուր երկրի կոնկրետ պայմանների, ստեղծագործաբար լուծելու դրանք։ Կյանքը հասունացրել և օրակարգ էր մտցրել պրոլետարիատի պայքարի համար կարևորագույն նշանակություն ունեցող հարցեր, որոնք սպասում էին իրենց լուծմանը։

ՍՄԿՊ XX համագումարը կոմունիստներին հատուկ համարձակությամբ քննադատեց դոգմատիզմը, վեր հանեց սխալներն ու թերությունները և ելնելով մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական դիրքերից, ցույց տվեց կոմունիստական շարժման առջև ծառացած պրոբլեմների լուծման ուղիները։

Ղեկավարվելով ՍՄԿՊ XX համագումարի որոշումներով, կոմունիստական պարտիաները խոշոր աշխատանք տարան դոգմատիկ սխալների վերացման և տարբեր երկրներում՝ նրանց կոնկրետ պայմաններին համապատասխան, սոցիալիզմի համար մղվող պայքարի ձևերի և մեթոդների ստեղծագործական մշակման ուղղությամբ։ Սկսած 1956—1957 թթ. կոմունիստական և բանվորական պարտիաների իդեոլոգիական աշխատանքի հիմնական բնագավառներից մեկը պայքարն է դոգմատիզմի դեմ։

Սակայն ՍՄԿՊ XX համագումարից հետո, օգտվելով կոմունիստական և բանվորական պարտիաների կողմից դոգմատիզմի և աղանդավորության դեմ սկսած պայքարի դժվարություններից, դլուխ բարձրացրին ռևիզիոնիստական տարրերը, որոնք «մարքսիզմի առանձին դրույթները հնացել են» լոզունգով, «մարքսիզմի ստեղծագործական զարգացման» դիմակի տակ կատաղի հարձակումներ սկսեցին մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի և բանվոր դասակարգի մարտական ջոկատների դեմ։

Ահա այդ հանգամանքը նկատի ունեցան 1957 թ. Մոսկվայում տեղի ունեցած Նոյեմբերյան խորհրդակցության մասնակիցները, որոնք ընդունված դեկլարացիայում նշեցին, որ ներկա էտապում կոմունիստական շարժման ամենավտանգավոր թշնամին հանդիսանում է ռևիզիոնիզմը։

Ժամանակակից ռևիզիոնիզմի յուրահատուկ գծերից մեկը կայանում է նրանում, որ այն սկզբից ուղղված լինելով իր

թե այսպես կոչված «ստալինիզմի» դեմ, այնուհետև դուրս եկավ ընդհանրապես մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի դեմ։

Ամերիկյան ռևիզիոնիստներ Ա. Լեյնը և Պ. Ռոբերտսոնը 1956 թ. «Պոլիտիկլ ափֆերս» ժուռնալում գրում էին. «Ժամանակակից իրադրության և փորձի պայմաններում մարքսիզմի շատ տեսակետների բացարձակ վերագնահատման անհրաժեշտություն է զգացվում։ Մարքսիզմը պետք է ստեղծագործաբար զարգացվի, և եթե անհրաժեշտ է, այն պետք է ռևիզիայի ենթարկել... Վերագնահատումը պետք է կատարվի ոչ միայն Ստալինի նկատմամբ, որը հիմա մոդա է դարձել, այլև Մարքսի, Էնգելսի և Լենինի։ Հատկապես անհրաժեշտ է դիսկուսիա ծավալել տարադիպոն մարքսիզմի երկու անկյունաքարային դրույթների՝ դիալեկտիկայի և դեմոկրատական ցենտրալիզմի մասին, ընդ որում վերջինս համարվում է Լենինի հիմնական ֆորմուլը, և ոչ թե Ստալինի»։

Միջազգային կոմունիստական շարժման ժամանակակից էտապում ռևիզիոնիզմի աշխուժացումը կապված է մի շարք պատճառների հետ, որոնցից կարևոր են հետևյալները, կոմունիստական շարժման նոր էտապի սկիզբը, նոր հարցերի առաջքաշումը, նախկինում ընդունված մի շարք դոգմատիկ կարգի սխալների քննադատությունը, բուրժուական և մանրբուրժուական տարրերի ազդեցության ուժեղացումը պրոլետարիատի վրա, որը իրեն սուր կերպով զգացնել է տալիս հատկապես շրջադարձերի ժամանակ։ Մի շարք կապիտալիստական երկրներ վերջին տարիներս ապրեցին ժամանակավոր տնտեսական վերելքի ժամանակաշրջան։ Այդ ևս իր հերթին նպաստեց ռևիզիոնիզմի ուժեղացմանը։

Կապիտալիստական երկրներում հրատարակվել են բազմաթիվ ռևիզիոնիստական գրքեր, բրոշյուրներ և հոդվածներ։ Հատկանշական է այն, որ ժամանակակից ռևիզիոնիզմը Բերնշտայնի, Կաուցկու և Բաուերի նման բացարձակորեն չի գործում, այլ ելնելով փոխված պայմաններից, երբ սոցիալիզմը հաղթանակել է մեծ թվով երկրներում և վերածվելով անհաղթահարելի ուժի նվաճել է աշխարհի առաջադեմ մարդկության սերն ու համակրանքը, հանդես է գալիս քողարկված ձևերով։

Ռևիզիոնիզմը բազմակողմանի աջակցություն է գտնում, խրախուսվում է միջազգային իմպերիալիզմի կողմից, որը միջոցներ չի խնայում կոմունիստական շարժումը քայքայելու և պառակտելու համար։

Եթե ի մի բերենք ժամանակակից ռևիզիոնիզմի առաջ քաշած «տեսությունները», ապա դրանք կհանգեն հետևյալին։

1. Կապիտալիզմի հակասությունները հաղթահարվել են։ Կապիտալիզմը այլևս չի ձգտում համաշխարհային տիրապետության, պատերազմները և ճգնաժամերը չեն հանդիսանում նրա անխուսափելի ուղեկիցները։

2. Բուրժուական պետությունը վերդասակարգային է։

3. Սուր հարձակումներ պրոլետարական ռևոլյուցիայի և պրոլետարական դիկտատուրայի մարքս-լենինյան ուսմունքի դեմ, բուրժուական դեմոկրատիայի գովերգում։

4. Ռևիզիայի է ենթարկվում դեմոկրատական ցենտրալիզմի լենինյան տեսությունը, որը համարվում է «հնացած» և այն էլ միայն մաքուր ռուսական երևույթ։

5. Հեռացում պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից և «ազգային կոմունիզմի» գովերգում։

6. Սոցիալիզմի մեջ կապիտալիզմի «խաղաղ ներաճման» արդեն հնացած տեսության վերակենդանացում, դասակարգային պայքարի ժխտում և այլն։

Ահա սրանք են այն հիմնական հարցերը, որոնց շուրջը ռևիզիոնիստները սուր են ճոճում կոմունիստների դեմ։

Ժամանակակից ռևիզիոնիզմը հատկապես ուժեղ արտահայտվեց ԱՄՆ-ում, Անգլիայում, Կանադայում, Իտալիայում, Նորվեգիայում, Դանիայում, Բրազիլիայում և այլ երկրներում։ Ժամանակակից ռևիզիոնիզմն իր լիակատար արտահայտությունը գտավ Հարավսլավիայի Կոմունիստների Միության ծրագրում։

Միջազգային իմպերիալիզմի ծավալած հարձակման պայմաններում, ռևիզիոնիզմը այնպիսի հոանդուն գործունեություն սկսեց, որով մի շարք կոմունիստական պարտիաների համար ստեղծվեց արտակարգ ծանր դրություն։

Ամերիկյան ռևիզիոնիստները պնդում էին, թե իբր կապիտալիզմը ԱՄՆ-ում և մյուս խոշոր կապիտալիստական երկրներում հաղթահարել է իր ներքին հակասությունները, որ նա չի ձգտում համաշխարհային տիրապետության, թե իբր այլևս պատերազմի լուրջ վտանգ չկա, դասակարգային պայքարը զգալի կերպով թուլացել է, և բանվորները առանց դժվարության կարող են հասնել «սոցիալիզմի»։

Մարքսիզմ-լենինիզմը ԱՄՆ-ում հայտարարվեց «ձախ աղանդավորություն» և առաջարկվեց այն փոխարինել սոցիալ-դեմոկրատական մարքսիզմով, այսինքն մարքսիզմով՝ առանց Լենինի։ Ժխտվեց դասակարգային պայքարը և մեջտեղ բերվեց դասակարգային համագործակցության թեորիան։ Ռևիզիոնիզմը սկսեց արագ աճել և շուտով իր կողմը գրավեց «Դեյլի Ուորկեր» թերթի խմբագրությանը, Նյու-Յորքի նահանգի պարտիական կոմիտեի անդամների մեծամասնությանը։ Պարտիայում սկսվեցին վտանգավոր խմորումներ, մի քանի հազար հոգի դուրս եկան պարտիայից։

ԱՄՆ-ի ռևիզիոնիստները «Դեյլի Ուորկեր» թերթի նախկին խմբագիր Ջոն Գեյտսի գլխավորությամբ պահանջում էին վերացնել կոմունիստական պարտիան և նրա փոխարեն ստեղծել անպարտիական «Քաղաքական գործունեության ասոցիացիա» կամ «Սոցիալիզմի նոր մասսայական պարտիա» կազմակերպությունը։

ԱՄՆ-ի կոմպարտիայի Նյու-Յորքի կազմակերպության անդամ Ուիլյամ Նորմանը «Դիսկուսիոն բյուլետենում» գրված հոդվածում վճռականորեն պահանջում էր լիկվիդացնել կոմունիստական պարտիան, նոր հարձակումներ գործելով դեմոկրատական ցենտրալիզմի և պարտիայի միասնականության իդեաների դեմ։

1956 թ. լույս տեսավ «Դեյլի Ուորկեր» թերթում Ա. Մագիլի հոդվածը, որում նա հարձակումներ էր գործում դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների վրա, ջանալով ցույց տալ, որ այն չի հանդիսանում մարքս-լենինյան տեսության հիմնական հարցերից մեկը, որ Լենինի և բոլշևիկյան պարտիայի կողմից հաստատված դեմոկրատական ցենտրալիզմը ռուսական

սպեցիֆիկ պայմանների ծնունդն է»։ Ըստ Ա. Մագիլի դեմոկրատական ցենտրալիզմը կարող է կիրառվել միայն այնպիսի պայմաններում, որպիսիք են. տնտեսական հետամնացությունը, կիսաֆեոդալական սոցիալական հարաբերությունները, բացարձակ դիկտատուրան և դեմոկրատիայի բացակայությունը։

Մեծ Բրիտանիայի կոմպարտիայում ռևիզիոնիստներ՝ Ռ. Հիլլը, Մ. Մաքյուենը և Պ. Կադոգանը հանդես եկան պարտիայի կազմակերպչական և իդեոլոգիական հիմունքների վերանայման պահանջով, որոնք ինչպես ցանկանում էին ապացուցել նրանք, իբր թե «հնացել» են։

Նորից ինչպես ԱՄՆ-ի և մյուս կոմպարտիաներում սուր պայքար ծավալվեց դեմոկրատական ցենտրալիզմի դեմ։ Անգլիական ռևիզիոնիստները գտնում էին, որ «Երկաթյա կարգապահության» կոնցեպցիան, որը անհրաժեշտ էր Սովետական Միության Կոմունիստական պարտիային Լենինի էպոխայում, այժմ Անգլիայի ժամանակակից պայմաններում պետք չէ։

Մ. Մաքյուենը գրում էր. «Մենք կարող ենք ընդունել նոր տիպի պարտիայի մասին լենինյան կոնցեպցիան, բացառությամբ դեմոկրատական ցենտրալիզմի...»։ Դեմոկրատական ցենտրալիզմը, ավելացնում է նա, իր էությամբ խորթ է անգլիական բանվոր դասակարգի տրադիցիաներին և ժամանակակից պայմաններում ավելորդ է։

Անգլիական ռևիզիոնիստները պահանջում էին թույլ տալ ֆրակցիաների և խմբերի ազատություն։

Համարյա թե նույնանման օպորտունիստական տեսակետներով հանդես եկան Կանադայի Բանվորական պրոգրեսիվ պարտիայի շարքերում խցկված մի շարք ռևիզիոնիստներ՝ Ջ. Սոլսբերգը, Ս. Սմիտը, Հ. Բինդերը և Ս. Լիվշիցը, որոնք հարձակումներ էին գործում մարքսիզմ-լենինիզմի հիմնական դրույթների վրա և առաջարկում վերացնել կոմունիստական պարտիան, այն փոխարինելով «սոցիալիստական միավորում» անպարտիական կազմակերպությամբ։ Ռևիզիոնիստների այդ խումբը ժխտում էր պարտիայի դեկավար դերը, դեմո-

կրատական ցենտրալիզմը և պրոլետարական ինտերնացիոնալիզմը։

Դանիայի Կոմպարտիայի նախկին նախագահ Ակսել Լարսենը լիովին հավանություն տալով Հարավսլավիայի Կոմունիստների Միության ռևիզիոնիստական ծրագրին, լայն ռևիզիոնիստական գործունեություն ծավալեց երկրում։

Իտալական ռևիզիոնիստ Ս. Ջոլիտին կոմպարտիայի VIII համագումարում 1956 թ. դեկտեմբերին հայտարարեց, որ հարկավոր է վերանայել «... իշխանության դրավման լենինյան տեսությունը»։ Իր «Ռեֆորմները և ռևոլյուցիան» վերնագրով բրոշյուրում նա կատաղի հարձակում է գործում պրոլետարիատի դիկտատուրայի ուսմունքի վրա, ժխտում դասակարգային պայքարը և ճգնում ապացուցել, որ ռեֆորմիզմը դեպի սոցիալիզմը զարգացման միակ ուղին է։ Նա ջանքեր է թափում համոզելու, որ տեխնիկական պրոգրեսի հետ միասին բանվոր դասակարգը կդառնա տիրապետող դասակարգ։

Ռևիզիոնիզմը սուր կերպով հանդես եկավ նաև Բրազիլիայի և այլ բազմաթիվ կոմպարտիաների շարքերում։

Միջազգային իմպերիալիզմը մեծ հույսեր էր կապել ռևիզիոնիզմի հետ, ամեն կերպ օժանդակելով նրան և հույս ունենալով քայքայել ու պառակտել համաշխարհային կոմունիստական շարժումը։

Սակայն միջազգային իմպերիալիզմի ջանքերը ապարդյուն անցան, ռևիզիոնիզմը չկարողացավ հաջողությունների հասնել, այն ամենուրեք հանդիպեց կազմակերպված միասնական հակահարվածի, ջախջախվեց և հետ շպրտվեց։

Ռևիզիոնիստական տարրերի դլուխ բարձրացնելուց հետո տեղի ունեցած կոմունիստական և բանվորական պարտիաների համագումարները, ղեկավարվելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով, կուռ շարքերով, միասնական հակահարվածով դեն նետեցին ռևիզիոնիստական թափթփուկներին, ցույց տալով, որ նրանց առաջ քաշած «տեսություններում» որևէ «նոր» բան չկա, այլ նորից կրկնվում են պատմության օբյեկտիվ զարգացման ընթացքով վաղուց դատապարտված «կլասիկ» ռեֆորմիզմի տեսական մարդանքները։

Հատկապես սուր պայքարի պայմաններում անցան ԱՄՆ-ի կոմպարտիայի XIV, Մեծ Բրիտանիայի կոմպարտիայի XXV արտակարգ, Կանադայի Բանվորական պրոգրեսիվ պարտիայի VI, Դանիայի կոմպարտիայի XX և մի շարք այլ կոմպարտիաների համագումարներ, որտեղ ռևիզիոնիստական տարրերը ավելի ուժեղ էին։

Սակայն վերոհիշյալ պարտիաները ևս համախմբելով իրենց ուժերը կարողացան ջախջախել ռևիզիոնիստներին՝ և իրենց բանաձևերում ընդգծեցին հավատարմությունը մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներին։

Ռևիզիոնիստները դուրս շպրտվեցին կոմունիստական և բանվորական պարտիաների շարքերից։

Սակայն չնայած ռևիզիոնիզմը ջախջախված է, բայց վերջնականապես չի ոչնչացված։ Այդ պատճառով էլ կոմունիստական և բանվորական պարտիաները չեն թուլացնում ռևիզիոնիզմի դեմ մղվող պայքարը։

Ռևիզիոնիզմին անբուժելի հարված հասցրեցին 1957 թ. նոյեմբերին Մոսկվայում տեղի ունեցած կոմունիստական և բանվորական պարտիաների երկու խորհրդակցությունները, որտեղ ելնելով միջազգային կոմունիստական շարժման զարգացման ներկա վիճակից, հստակ կերպով նշվեց, որ բանվորական շարժման համար հիմնական վտանգը առայժմ դեռ հանդիսանում է ռևիզիոնիզմը։

ՍՄԿՊ XXI արտահերթ համագումարում ի մի բերելով ռևիզիոնիզմի դեմ մղված պայքարի արդյունքները և խոսելով Նոյեմբերյան խորհրդակցությունների միջազգային նշանակության մասին, Ն. Ս. Խրուշչովը ասաց. «Ռևիզիոնիստներին չհաջողվեց մարքս-լենինյան ուղուց շեղել որևէ եղբայրական պարտիա։ Նրանց հետևից գնացին միմիայն օպորտունիստների ողորմելի խմբիկները և դասակարգային թշնամու կրակի տակ շշկլված միայնակները։ Այդ կեղտոտ նստվածքը, որն աղտոտում էր կոմունիստական շարժման մարուր աղբյուրը, պայքարի ընթացքում մակերևույթ դուրս եկավ և դեն շպրտվեց։

Կյանքը, բանվոր դասակարգի պայքարի պրակտիկան, հասարակական զարգացման ամբողջ ընթացքը հերքեցին ռևիզիոնիստների պնդումները։ Դեն շպրտվեցին ռևիզիոնիզմի հիմնական թեզիսները կապիտալիզմի բնույթի փոփոխման մասին, կապիտալիստական սիստեմի անճգնաժամային զարգացման մասին, սոցիալիզմի մեջ կապիտալիզմի խաղաղ ներաճման մասին և այլն»[1]։

Միջազգային կոմունիստական շարժումը պատվով դուրս եկավ այս փորձությունից։ Նա ավելի ամրապնդված և համախմբված, զինավարվելով մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական ուսմունքով, հաստատուն առաջ է ընթանում աշխարհի ժողովուրդներին առաջնորդելով դեպի սոցիալիզմի լուսաշող գագաթները։

---

[1] Ն. Ս. Խրուշչով, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թվականների կոնտրոլ թվերի մասին, էջ 120—121։

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԺՍՌՄ թևակոխումը կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանը և միջազգային կոմունիստական շարժումը 5

Կոմունիստական և սոցիալիստական պարտիաների համագործակցությունը բանվորական շարժման զարգացման հրամայողական պահանջն է 32

Ռևիզիոնիզմը կոմունիստական շարժման գլխավոր վտանգն է . 81

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵՆԴՐՈՇ ԱՐՇԱԿԻ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Միջազգային կոմունիստական շարժումը ժամանակակից էտապում

Խմբագիր՝ Զ. Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ Ռ. Խ. ՄԱՆՈՅԱՆ
Նկարչական ձևավորումը՝ Ռ. Դ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Գ. Ա. ՍԱՐՈՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎՀ 05223 Գրավեր 193 Հրատ. 1858 Եջեր 636 Տիրաժ 1500

Հանձնված է արտադրության 8/IX 1960 թ. Մակագրված է տպագրության 24/IX 1960 թ. Տպագրական 0 մամուլ, հրատ. 4 մամուլ. Թուղթ 84×108¹/₃₂
Գինը կազմով 2 ռ. 50 կ., 1/I 1961 թ. 25 կ.

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչության տպարան. Երևան, Բարեկամության, 24

ЦЕНА
1 р.
55550

ԳԻՆԸ 2 Ռ. 50 Կ.
1/I 1961 թ. 25 Կ

ԵՐԵՎԱՆ
1960